Ազգ
Azg
11 ՅՈՒՆԻՍ 2009 ՀԻՆԳՇԱԲԹԻ 107 (4243)
ISSN: 1829-1651

## «Հայաստանի բանկերի միջոցով PKK-ի փողեր փոխանցելը հորինվածք է»

**Հայաստանի բանկերի միջոցով Քրդստանի բանվորական կուսակցությանը փողեր փոխանցելու վերաբերյալ թուրքական աղբյուրների տարածած լուրերը հորինվածքներ են եւ բացարձակապես չեն համապատասխանում իրականությանը: ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայությունը, պատասխանելով «Նոյյան տապանի» հարցին, նաեւ նշել է. «Հայաստանի Հանրապետությունում ներդրված է փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործուն եւ արդյունավետ համակարգ: Հայաստանը անդամակցում կամ սերտ համագործակցում է փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ներգրավված հիմնական միջազգային կազմակերպությունների հետ: Առ այսօր նշված փաստերի վերաբերյալ որեւէ հարցում կամ հաղորդագրություն չի ստացվել այդ կազմակերպություններից»: Հիշեցնենք, որ թուրքական «Սթար» թերթը՝ վկայակոչելով Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (MIT) տվյալները, հաղորդել էր, թե իբր Հայաստանի եւ Կիպրոսի բանկերի միջոցով տարեկան 1 միլիարդ եվրո է փոխանցվում Հյուսիսային Իրաք՝ Քրդստանի բանվորական կուսակցությանը (PKK):**

# Հայոց լեզվից եւ մաթեմատիկայից բարձր միավոր են ստացել նաեւ բազմաթիվ թույլ դիմորդներ

**ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

Բուհական քննությունների ժամանակ արդարության կոչնակ հնչեցնող կրթության ոլորտի պատասխանատուներին ամեն տարի պետք է հիշեցնել, որ քննական ամեն մի կենտրոնում կատարվածի մասին լուրերը փոխանցվում են գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, իսկ մայրաքաղաքում տեղի ունեցածը հայտնի է դառնում մի քանի ժամվա ընթացքում: Եթե կարծում են, թե հայոց լեզու եւ գրականություն առարկայից բարձր միավորներ՝ 18-20 ստացած որոշ աշակերտների անունները պիտի կարողանան կոծկել, չարաչար սխալվում են, որովհետեւ արդեն իսկ հայտնի է դարձել, որ դրանց որոշ մասը, չհաշված արտակարգ ընդունակություններ ունեցող երեխաների, քննություններից մոտ մեկ ամիս առաջ օգտագործել է իր անձնական կապերը եւ նյութական միջոցները, ինչպես դիմորդներն են ասում, նրանց համար արդեն «մուծված է եղել»: Համոզվելու համար ընդամենը պետք է ստեղծել մի հանձնախումբ եւ ստուգել բարձր միավորներ ստացածների գիտելիքները:



Իմանալու համար, թե ինչ մեխանիզմներով են նրանք ստացել այդ միավորները, բավական է խոսել ամբողջ տարին տքնած, բայց ցածր միավորներ՝ 8-14, վաստակած դիմորդների հետ: Լավատեղյակ մարդիկ նշում են մի քանի տարբերակներ՝ «էլիտար» դիմորդները հանձնում են դատարկ ձեւաթուղթը, որտեղ հետո ստանան 19-20 միավորի համար լրացվածը, թեստ կազմողները նրանց նախապես տրամադրում են 10-15 միավորի համար անհրաժեշտ բարդ հարցերի պատասխանները, նկատի առնելով, որ 5-10 միավոր կկարողանան ինքնուրույն հավաքել, նրանց տեղավորում են այն լսարաններում, որտեղ հնարավորություն կա հուշելու եւ արտագրելու: Ահա թե ինչու էին հայերենից քննության թեստերը դիմորդների մի մասի համար «նորմալ»: Այդ կարծիքն են հայտնել հատկապես պետհամալսարանում տեղակայված քննական կենտրոնից դուրս եկած դիմորդները: «Ընտրովի» լսարանների տարբերակը բավականին համոզիչ է, որովհետեւ եթե դիմորդը վիճակահանությամբ է հանում նստարանի թիվը, ապա լսարանի ընտրությունը կատարում է համակարգչի առջեւ նստածը:

Տես էջ 2

# Ծաղկային ձեւավորումներ քաղաքապետի երդմնակալությունից առաջ

Երեկ, մինչեւ ուշ երեկո շարունակվում էին Երեւանի Մոսկվայի հրապարակում իրականացվող ծաղկային ձեւավորումները: Ինչպես «Ազգին» տեղեկացրեց Երեւանի քաղաքապետարանի կանաչապատման վարչության պետ Ավետ Մարտիրոսյանը. «Շուրջ 5000 պետունյա եւ կատարանտուս հոլանդական ցրտադիմացկուն մեկամյա ծաղիկներով ձեւավորվել են Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության դրոշները: Մեկ շաբաթից այդ ծաղիկները ավելի ցայտուն տեսք կստանան: Իսկ հաջորդ տարվա համար ջերմոցում այդ նույն ծաղիկները կածիլվեն եւ այլեւս հարկ չի լինի դրանք Հոլանդիայից ներկրել»: Մոտ 7 ամիս մշտապես ծաղկող ծաղիկները առանձնահատուկ շուք ու գեղեցկություն կպարգեւեն: Իսկ դրանց առաջին ականատեսները կլինեն այսօր քաղաքապետի երդմնակալությանը հրավիրվածները:



**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

**ՊԵՏԵՐԲՈՒՐԳՅԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ**

# Լեզուն իսկապես ոսկոր չունի

*Ադրբեջանը համաձայնե՞լ է ԵԱՀԿ ՄԽ առաջարկներին, ու Հայաստանն էլ չի՞ զիջում*

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունները կարող են հետաքրքրական զարգացումներ ունենալ, կամ նվազագույնը այդպիսիք ի ցույց կդրվեն հանրությանը՝ որոշակի դիվիդենտներ ապահովելու համար: Ինչ-որ քայլերի լինելիության մասին հայտարարությունները հաճախակիանում են, մինչդեռ դժվար է խոսել դրանց իսկության մասին:

Ամեն դեպքում, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հաջորդ հանդիպման հնարավորությունը ցույց է տալիս, որ բանակցությունների գործընթացում կան որոշ տեղաշարժեր: Ադրբեջանական «Թրենդ» գործակալությանը այսպիսի հայտարարություն է արել ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզան:

«Քիչ իմաստ կլիներ հերթական հանդիպում անցկացնելու, եթե Սանկտ Պետերբուրգի հանդիպմանը որոշ առաջընթաց ձեռք բերված չլիներ», նշել է Բրայզան, ավելացնելով, որ նախագահների հերթական հանդիպումը կարող է կայանալ Ռուսաստանում, թեեւ ժամկետներ որոշված չեն:

Ըստ Բրայզայի, նախագահների հերթական հանդիպումը տեղի չի ունենա Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբամայի մոսկովյան այցի շրջանակում: «Չեմ կարծում, որ նախագահների հանդիպման հնարավորություն կա նախագահ Օբամայի մոսկովյան այցի ժամանակ», նշել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահը:

Սրա հետ մեկտեղ, ադրբեջանական կողմը, ճիշտ է, ի դեմս երկրորդական պաշտոնյայի՝ փոխարտգործնախարար Արազ Ազիմովի, հայտարարել է, թե Ադրբեջանը ընդհանուր առմամբ համաձայնել է Մինսկի խմբի համանախագահների առաջարկություններին, «սակայն չկա ցանկալի փոխզիջում Հայաստանի կողմից»:

«Ինտերֆաքսի» փոխանցմամբ, Ազիմովը ընդգծել է, թե Ադրբեջանը պատրաստակամ է, մինչդեռ «Հայաստանում պետք է տեղի ունենան արմատական փոփոխություններ»: Բնական է, որ նման դիրքորոշումը հարմար է խուսափելու համար սեփական պատասխանատվությունը կրելու հարցում:

Ինչեւէ, դժվար է կանխատեսել, թե ուր կտանեն զարգացումները, եթե այդպիսիք ընդհանրապես լինեն: Բայց հետաքրքրական է, որ European Voice պարբերականը, որ հիմնականում տնտեսական խնդիրներ է ներկայացնում, անդրադառնալով ղարաբաղյան խնդրին՝ բարձրացրել է ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական առաքելություն իրականացնող երեք համանախագահների առումով փոփոխություն մտցնելու անհրաժեշտության հարցը, որ սակայն չի վերաբերում այդ ձեւաչափում Թուրքիային ներգրավելու հավանական խոսակցությունների իրականացման հեռանկարին:

Պարբերականը նշում է ղարաբաղյան հակամարտության «ոչ սառեցված» լինելու մասին եւ պատերազմի մեծ հավանականության, որի հետեւանքով էլ կարող է առաջանալ պատասխանատվության խնդիրը: Եվ եթե այդպիսին կունենա նաեւ Եվրոմիությունը, ապա հարկ է, որ արդեն իսկ ԵԱՀԿ Մինսկի խմբում ընդգրկվի ԵՄ ներկայացուցիչ, այլ ոչ թե լինի Ֆրանսիան, ինչպես ներկա ձեւաչափն է:

**Ա. Հ.**

# Ճարտարապետ Սինանի տարին Թուրքիայում

**Ըստ Panarmenian.net-ի, Թուրքիայում սկսել է Օսմանյան կայսրության նշանավոր ճարտարապետներից մեկի՝ հայազգի Սինանի հիշատակին նվիրված տարին: Սինանին նվիրված միջոցառումները ծրագրվում է անցկացնել Լոնդոնում, Երուսաղեմում, Փարիզում եւ Կահիրեում: Հանրաճանաչ ճարտարապետ Սինանը ծնվել է 1489-ին, հայկական ընտանիքում: Նրան ցանկանում էին դարձնել ենիչերի, բայց հետո սուլթան Սելիմը նրան ուղարկել էր սովորելու նկարչություն եւ ճարտարապետություն: Սինանը գործել է հինգ սուլթանների օրոք եւ ստեղծել է իսլամական ճարտարապետության ականավոր նմուշները, որոնց թվում են Սուլեյմանիեի մզկիթը, Դոլմաբաղչեի պալատները եւ Թոփքափին: Սինանն ընդհանուր առմամբ կառուցել է 365 շենք՝ մզկիթներ, մեդրեսեներ, դամբարաններ, հանրային տներ եւ բաղնիքներ: Սինանը ճարտարապետների տոհմի հիմնադիրն է, նրա ժառանգներից մեկը՝ Զաքարիա Միլդանօղլուն, մասնակցել է Աղթամար կղզում գտնվող Սբ Խաչի վանքի վերականգնմանը:**

# Սուրբ Հարության տաճարում հայտնաբերվել է հայ քահանայի դիակ

Ըստ «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականի, Երուսաղեմի Սուրբ Հարության տաճարում հունիսի 9-ին հայտնաբերվել է մի հայ քահանայի դիակ: Մահացած հոգեւորականը 34-ամյա Արմեն Խաչատուրյանն է: Ինչպես հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը՝ վկայակոչելով «Ֆրանսպրես»-ի լուրը, Երուսաղեմի ոստիկանության խոսնակ Միկի Ռոզենֆելդը տեղեկացրել է, որ հայ հոգեւորականի դիակը հայտնաբերվել է սանդղավանդակում: «Հայ հոգեւորականի մահը հանցագործության հետեւանք չէ: Ամենայն հավանականությամբ, նա վայր է ընկել ու մահացել», ասել է Ռոզենֆելդը:

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քահանա Մելիքյանը «Նոյյան տապանին» տեղեկացրել է, որ Արմեն Խաչատուրյանը հանկարծամահ է եղել վերնատան մատուռի մեջ: «Ներկայումս մարմինը փոխադրված է Թել Ավիվ, ուր համապատասխան հետազոտություններ անցկացնելուց հետո մեզ կտեղեկացնեն մահվան պատճառը», ասել է տեր Վահրամը:

Արմեն Խաչատուրյանը 8 տարի առաջ Հայաստանից փոխադրվել էր Երուսաղեմ՝ իր ծառայությունը բերելու Սրբոց Հակոբյանց վանքում: Նա ծառայել է իբրեւ վանական եւ հոգեւոր աստիճան չի ունեցել:

# «Համաներում» գործողությունը՝ ԵԽԽՎ-ում Հայաստանի հիմնական «վահան»

*Չկայացած փաստահավաք խմբի հանգամանքը կարելի է չեզոքացնել այլ պահանջների կատարմամբ*

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը հունիսի 22-26-ի ամառային նստաշրջանի օրակարգի նախագծում, ի թիվս այլ հարցերի, ներառել է նաեւ Հայաստանի խնդիրը, իսկ ավելի կոնկրետ՝ Հայաստանի կողմից ԵԽԽՎ 1643 բանաձեւի դրույթների կատարման գնահատականը: Դրանցից ավելի շատ ու առավել հաճախ խոսվում է այն առաջարկ-պահանջների մասին, որոնք վերաբերում են 2008 թ. մարտի 1-2-ի դեպքերից հետո ձերբակալվածների առնչությամբ «բարի» ելքերի ապահովմանը:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հունվարի 27-ին ընդունված թվով արդեն երրորդ՝ 1643 բանաձեւը հետաքրքրական դրույթներ էր պարունակում, որոնք, ըստ էության, մտցվել էին ի հակակշիռ ձայնի իրավունքից հայաստանյան պատվիրակությանը զրկելու մոնիտորինգի հանձնաժողովի կիսատ մնաց առաջարկ-պատժամիջոցի կիրառման:

11 դրույթից բաղկացած բանաձեւում վեհաժողովը, համազեկուցողներ Ժորժ Կոլոմբիեի եւ Ջոն Պրեսկոտի զեկույցի հիման վրա, նախ անդրադառնում էր նախորդ բանաձեւերին ու դրանցում ամրագրված այն վիճակին, որ չնայած Հայաստանի իշխանությունների կողմից ԵԽԽՎ պահանջները բավարարելու կամքի առկայությանը՝ առաջընթացը գնահատվել էր «ոչ նշանակալի»:

Նշելով 2008-ի մարտի 1-2-ի դեպքերի «անկախ, անկողմնակալ եւ արժանահավատ հետաքննության» պահանջի մասին՝ վեհաժողովը 1643 բանաձեւով ողջունում էր ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի առաջարկով Հայաստանի նախագահի որոշմամբ այդ դեպքերի հետաքննության փաստահավաք խմբի ստեղծումը, նաեւ այդ խմբում ընդդիմության մասնակցությունը:

Տես էջ 3

# Ընթացիկ

## Ո՞ւմ եւ ինչո՞ւ են տրամադրում պետական երաշխիքներ

Երեկ, փաստորեն, կարճ ժամանակով՝ 15 րոպով Ազգային ժողովը հաղթեց կառավարությանը, քանի որ վիճահարույց հարկային փաթեթի՝ երեկ կայանալիք քվեարկությունը, կառավարությունն, ի դեմս ֆինանսների փոխնախարար Սուրեն Կարայանի, հետաձգեց 15 րոպով: ԱԺ տնտեսական հանձնաժողովի նախագահ **Վարդան Այվազյանը** լրագրողներին ասաց, որ երեկ առավոտյան այս փաթեթի շուրջը քաղաքական ուժերի քննարկում է եղել, կառավարությունն այդպես է որոշել՝ հետագայում ներառելու համար խորհրդարանականների առաջարկները: Վ. Այվազյանը տեղեկացրեց, թե հարկային ներկայացուցիչն արտադրություն չի մտնելու, արտահանմամբ զբաղվող ընկերություններում այդպիսի ներկայացուցիչ չի լինի, քննարկվում է գինու եւ գարեջրի արտադրություններում հարկային տեսուչի ներկա լինելու նպատակահարմարության հարցը:

### «Ժամանակավրեպ» հարցեր

ՀՀԿ պատգամավոր **Մկրտիչ Մինասյանը** գյուղատնտեսության ոլորտին վերաբերող հարցով երբ դիմեց կառավարությանը, ամբիոնին մոտեցած գյուղնախարար **Գերասիմ Ալավերդյանը** պատասխանելուց առաջ նկատեց. «Այո, ժամանակավրեպ հարց է»: Երբ դահլիճը հասկանալով, որ գյուղնախարարն այսպիսով ուզում է հաճոյախոսել հարց տվողին, ուղղակի սխալ բառ է օգտագործել, ծիծաղեց, նախագահությունից հուշեցին՝ «հրատա՞պ»: Ալավերդյանն ուղղեց իրեն՝ «հրատապ հարց է»: Նրա պատասխանից հետո չգոհացած Մ. Մինասյանն էլ այսպես արձագանքեց. «Ճիշտ որ ժամանակավրեպ հարց եմ տվել»:

### Որտեղի՞ց այդքան փող

«Ժառանգություն» խմբակցության պատգամավոր **Ստյոպա Սաֆարյանը** երեկ կառավարությանը այս էլ որերորդ անգամ հարցնում էր ձեռնարկություններին պետական երաշխիքներ եւ վարկեր տրամադրելու, իր կարծիքով, ընտրողական վերաբերմունքի մասին եւ ոչ միայն. «Ովքե՞ր են «Գլենդել հիլզի», Քաջարանի պղնձամոլիբդենային գործարանի, հեռախոսային «Բիլայն» եւ «Վիվասել» ընկերությունների, «Հայռուսգազի» իրական տերերն ու բաժնետերերը, կառավարության ներկա եւ նախկին ո՞ր անդամները, վարչապետներն են ներգրավված այդ ընկերություններում, որոնք տարբերաբար արժանանում են կառավարության հոգածությանը: Եթե անգամ «Գլենդել հիլզին» պետական երաշխիքների տրամադրումը կապ չունի հակաճգնաժամային միջոցառումների հետ, ինչը փաստում են ֆիննախն ու այդ ընկերության ներկայացուցիչները, ինչո՞ւ փոքր, միջին եւ անգամ աշխատատեղեր ստեղծող մեծ ձեռնարկություններին բանկերից փոխառություն տալու նպատակով պետական երաշխիքներ տրամադրելու փոխարեն՝ դրանք տրամադրվում են այնպիսի կազմակերպությունների, որոնք անցյալում գերշահույթներ են ստացել՝ Քաջարանի պղնձամոլիբդենային գործարան, «Գլենդել հիլզ»: Հնարավոր չէ՞ր, որ նման երաշխիքներ տրվեին փոքր, միջին եւ իրական աշխատատեղեր ստեղծող ու ապահովող մեծ ձեռնարկություններին: Ի՞նչ կապ կա ՀՀ ներկա եւ նախկին բարձրաստիճան այրերի անունների հետ կապվող գերշահույթներ ստացած այդ կազմակերպությունների եւ դրանց պետական երաշխիքներ տրամադրելու միջեւ: Այս ամենի եւ ներկայիս վարչակազմի ու նախկին նախագահի միջեւ առնչություն կա՞: Ինչպե՞ս է հնարավոր նախագահի աշխատավարձով միլիարդատեր դառնալ, ինչի՞ եւ ո՞ւմ հաշվին: Չե՞ք կարծում, որ աղետի գոտին այսօր ավելի շատ ոչ թե կարիք ունի բնակարանաշինության («Գլենդել հիլզն» է այնտեղ աշխատում-Մ.Խ.), որը փողերի լվացման դասական ուղի է, այլ՝ աշխատատեղերի»:

Այս՝ մեղադրանքներ պարունակող ծավալուն հարցին ֆինանսների նախարար **Տիգրան Դավթյանը** պատասխանեց, թե կառավարությունը ճգնաժամի պայմաններում տնտեսության աջակցման տարբեր գործիքներ է կիրառում, այդ թվում՝ պետական երաշխիքների տրամադրումը. «Գտնում եմ եւ համոզված եմ, որ մենք մեզ համար սուրբ պարտավորություն ենք կատարում՝ ապահովելու ենք աղետի գոտու բնակչության խնդիրները եւ բնակարանների խնդիրը լուծելու ենք: Մենք այս դժվարին պայմաններում ներգրավում ենք ռեսուրսներ, տրամադրում ենք երաշխիքներ, կատարում ենք ընթացակարգեր, եւ կարծում եմ՝ սրանք միայն գովեստի խոսքի արժանի գործողություններ են: Ինչ վերաբերում է «Գլենդել հիլզին»՝ այդ ընկերությունն ընտրվել է բաց մրցույթի միջոցով, օրենքով սահմանված ժամկետներում, այդ ընկերությունն այսօր բավական ակտիվ գործունեություն է կատարում եւ մեծ ծավալի աշխատանք: Այն ընկերություններին, որոնց մենք վարկեր եւ երաշխիքներ ենք տրամադրել, այդ թվում՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին, այդ առումով ասել ենք. մենք համակարգաստեղծ ընկերություններին, որոնք ապահովում են տասնյակ հազարավոր աշխատատեղեր եւ ռեալ ազդեցություն ունեն մեր տնտեսական կյանքի վրա, շարունակելու ենք աջակցել»:

Նա ավելացրեց, որ տելեկոմունիկացիոն ոլորտի բաժնետերերն էլ հայտնի են՝ դրանք ռուսական հանրահայտ ընկերություններն են:

**Մ. Խ.**

## Դիտարկումներ ընդունելության քննությունների ընթացքի վերաբերյալ

**Ընդունելության քննությունների առաջին անհաջող փորձի առիթով հեռուստատեսությամբ մի պաշտոնյա ասում էր, թե դրա պատճառը պետք է փնտրել ոչ թե թեստերի դժվարության մեջ, այլ՝ դիմորդների ոչ այնքան լավ պատրաստվածության: Այսօրվա ամենից շատ քննարկվող՝ թեստերի բովանդակության բարդության թեման, իհարկե, հարաբերական է. կախված դիմորդի հիմնավոր կամ թույլ իմացությունից: Այն հանգամանքը, որ գրեթե բոլոր դիմորդներն առնվազն մեկ ուսումնական տարի մասնավոր պարապմունքներ են անցկացնում, այն տպավորությունն է թողնում, թե բոլորը հիմնավոր գիտելիքներ ունեն: Բայց դա՝ առաջին հայացքից:**

**Հայոց լեզու եւ գրականություն ու մաթեմատիկա առարկաների թեստերի բովանդակությունից գրեթե բոլորը դժգոհ էին՝ նկատելով, որ դրանք չեն համապատասխանում ուսումնական պարտադիր ծրագրին: Կենսաբանության թեստերի հարցերն էլ խճողված, անհասկանալի ձեւակերպումներով՝ թյուրիմացություն էին առաջացրել: Ինչ վերաբերում է հայոց լեզվի եւ գրականության թեստերում ծրագրից դուրս ընդգրկված հարցերին, ապա մեկ-երկու բացառությամբ դրանք համապատասխանում են պարտադիր ծրագրին: Սակայն թեստ կազմողները, կարծում ենք, չափազանցության գիրկն են ընկել, սկզբունքորեն մնալով ծրագրային շրջանակներում՝ նրանք ուրիշ ծուղակներ են սարքել, քերականական որեւէ թեմայի վերաբերող նմուշների մի զգալի մաս դպրոցական մակարդակից ավելի բարձր իմացություններ են պահանջում, մի բան, որ հետագայում մասնագիտական ֆակուլտետներում ավելի հանգամանալի ու մանրամասն ուսումնասիրության է ենթարկվում: Օրինակները բազմաթիվ են՝ եւ՛ հնչյունաբանության, եւ՛ բառակազմության, եւ՛ շարահյուսության բաժիններին վերաբերող:**

**Տարօրինակ է գնահատման համահարթեցված ձեւը, ամենապարզից մինչեւ ամենաբարդ բոլոր հարցերը գնահատվում են 0,25 միավորով: Քննական թեստերի 80 հարցին տրված է երեք ժամ. յուրաքանչյուր հարցին՝ 2,25 րոպե, որքանո՞վ է սա բավարար հատկապես մաթեմատիկա, ֆիզիկա առարկաներին: Հետաքրքրական է նաեւ, թե ինչ տրամաբանությամբ է հայոց լեզու եւ գրականություն առարկայից գիտելիքի նույն մակարդակ պահանջվում եւ՛ մասնագիտական բուհ ընդունվողից, եւ՛ ճշգրիտ գիտությունների ուղղությամբ կամ տնտեսագիտության ֆակուլտետ դիմողից: Կարծում ենք, ավելորդ է վերջիններիս ծանրաբեռնել թեստերում առկա հայ գրականության հարցերով, մանավանդ որ սրանք բովանդակությամբ նաեւ անհեթեթ են, նման ձեւով գրականության գիտելիք ստուգելը խաբկանք է, ընդամենը հիշողության մարզում: Գրականությունն անգիր անել չէ, գրական գործը պետք է կարողանալ գնահատել, վերլուծել, հասկանալ լեզվաոճական, գեղարվեստական առանձնահատկությունները եւ այլն: Իսկ թե ով ում նամակ գրեց, կամ որ ոտանավորից է նշված մի երկու տող եւ կամ ով երբ «փռշտաց»-ները, գրականությունից հեռու բաներ են, անհամեմատելի՝ ժամանակին ընդունված ստեղծագործական շարադրության մեթոդից, որը նաեւ դիմորդի գրավոր մտածողությունն էր զարգացնում: Նկատենք նաեւ, որ այսպես նախանձախնդրորեն թեստեր կազմողները, մի շարք հարցերում լեզվական անճշտություններ են թույլ տվել:**

**Մի քանի դիտարկում կազմակերպչական հարցերի վերաբերյալ: Քննական կենտրոն ներկայանալու ժամը սահմանված է 8.00-ին, դիմորդները ներս են մտնում մեկ ժամ հետո: Եվս մեկ ժամ լսարան-դասասենյակներում են անցկացնում: Երկու ժամ մինչեւ քննությունը, կարծում ենք, լրացուցիչ լարվածություն է ստեղծում, որն ավելորդ է:**




**Ինչպե՞ս եւ ի՞նչ սկզբունքով են ընտրվում քննական կենտրոնները, ի՞նչ չափանիշներ են գործում: Թիվ 190 միջն. դպրոցը դրանցից մեկն է: Խոսքը չի վերաբերում դպրոցի ներքին հարմարություններին կամ պայմաններին: Հարավարեւմտյան Բ թաղամասում բակերի, շենքերի, ոլորմոլոր բազմաթիվ ճամփաների մեջ թաքնված այս դպրոցը գտնելը եւս մեկ դժվարություն է. տաքսիստներից շատերն անգամ հարցուփորձ անելով տեղ հասան: Մեզ խորհուրդ էին տվել նախապես գնալ եւ տեղանքին ծանոթանալ, բայց ով եւ ինչու է մեր ժամանակը կամավոր տնօրինում եւ նյարդերը փորձարկում: Իսկ դպրոց տանող անմիջական նեղ ճանապարհը կամ փողոցը զուրկ է մայթից, իսկ այստեղով տարին բոլոր երեխաներ են գնում-գալիս: Քննական ողջ ընթացքում մուտքի մոտ կարգ ու կանոն էին հաստատում ոստիկանները, չնայած նրանք բավականին զուսպ էին ծնողական տիրող անհանգստության, աղմուկի հասնող խոսակցությունների նկատմամբ, բայց եւ այնպես, տպավորությունը ճնշող էր: Քննական կենտրոնների շուրջը հավաքված ծնողների վիճակը քննություն հանձնողներից ավելի լարված ու նյարդային է: Սա հասկանալի մի շարք պատճառներ ունի: Իհարկե, բուհ ընդունվել-չընդունվելով աշխարհը չի վերջանում, դա ճակատագրական համարելն էլ չափազանցություն է, ի վերջո կա դիմելու հաջորդ եւ մյուս տարիների հնարավորությունը: Սակայն, կարելի է հասկանալ ծնողների այսչափ տագնապալի վիճակը: Բուհ ընդունվելու ներկայիս հիմնական եւ ամենից տարածված գրավականը մասնավոր պարապմունքներն են, ինչպես պատկերավոր նշված էր ծնողների մի բողոք-նամակում, «ընդհատակյա մասնավոր բուհական ցանցում»: Այդ պարապմունքները պարզ ապրելակերպի ընտանիքների համար բավական գումար են կազմում 3 առարկայի դիմաց, շուրջ 1 մլն դրամ, որը նրանց հետ չի տրվում:**

**Այսպես, թեստեր կազմողների, ամիսը մեկ ուղեցույց, ինչ-որ ձեռնարկ, «7 թեստ», «11 թեստ» եւ այլ բաների հեղինակների, այդ ժողովածուների տպագրիչների եւ այլոց կազմակերպված ցանցի մեջ ամեն տարի նորանոր ընտանիքներ են հայտնվում, թպրտում ավելորդ սթրեսների, հոգեկան, ֆիզիկական ու ֆինանսական կորուստների մեջ:**

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱՂԱԼՅԱՆ**

***Հ. Գ. Յուրաքանչյուր քննությունից մոտ 2 ժամ անց ԳԹԿ-ի կայքէջում տեղադրվում են թեստերն ու դրանց ճիշտ պատասխանները, ըստ այդու, դիմորդն անմիջապես կարող է հաշվարկել իր գնահատականը: 5 օրից համապատասխան քննական կենտրոնի պատերին փակցվում են գնահատականների պաշտոնական ցուցակները: Առաջարկվում է այդ ցուցակները տեղադրել նույն կայքէջում՝ ժամանակի խնայողության համար նաեւ (այլապես եւս մեկ անգամ կորած-մոլորած դպրոցներ հասնելու ո՛չ ժամանակ, ո՛չ նյարդեր կան):***

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Հայոց լեզվից եւ մաթեմատիկայից...

*1-ին էջից*

**Եվ եթե նրան արդեն տրվել է «ընտրյալների» ցուցակը, նշանակում է՝ նա բոլորին պիտի հավաքի մեկտեղ, որ կարողանան 2 ժամում «ընկերոջ դարդով ապրել, սիրած աղջկան հուշել, կամ այլ բաների մասին մտածել»:**

**Ու եթե հայոց լեզվի եւ գրականության քննության ժամանակ դա արվել էր հմտորեն, ապա մաթեմատիկայի քննության ժամանակ «արտագրության լսարանների» թիվը կրկնակի աճել էր, քանի որ հայերենի քննությունից գոհ արդյունքները իրարանցում էին առաջացրել եւ ստիպել գործի անցնել «մուծելու» կարողություն ունեցողներին: Իսկ նյութապես անապահով կամ ծնողազուրկ երեխաներին մնում էր ապավինել Աստծուն՝ 8 միավորից պակաս չստանալու համար: Ցավալի էր դիմորդներից լսել, որ մաթեմատիկայից ուժեղ իրենց դասընկերներից շատերը 10-14 միավոր են ստացել, իսկ միջին ընդունակություն ունեցողները չեն հավաքել անհրաժեշտ 8 միավորը, մինչդեռ մաթեմատիկայից թույլ որոշ դիմորդներ ստացել են 17 եւ ավելի միավորներ:**

**Դպրոցական նստարանից նորանոր կտրված այս դիմորդները ճակատ-ճակատի բախվեցին հայաստանյան իրականության հետ:**

**Առաջին հարվածը միշտ ուժգին եւ անմոռաց է լինում, եւ այս դիմորդներին ամեն վայրկյան հանգիստ չի տալու այն միտքը, որ իրենք ապրում են մի իրականության մեջ, որտեղ առաջ են գնում ոչ թե գիտելիքներով, այլ «մուծելով»:**

**Քննությունները դեռ չեն ավարտվել, դեռ խոսվում է եւս 2 բարդ քննության՝ հայ ժողովրդի պատմության եւ անգլերենի մասին: Հասկանալի է, որ նույնը պիտի տեղի ունենա նաեւ այս քննությունների ժամանակ՝ գլխապտույտի հասցնող սրտխառնուք պատճառելով ամբողջ տարին գրքից գլուխ չբարձրացրած դիմորդներին: Նրանք արդեն գիտեն, որ քննություններից հետո «մուծածներն» են ընդունվելու իրենց երազած ֆակուլտետներում, այն էլ՝ անվճար համակարգում, մրցույթի դեպքում՝ նաեւ վճարովիում: Հետո «մուծելով» ավարտելու են բուհն ու դառնալու են պաշտոնյաներ եւ իրենց են ղեկավարելու: Իսկ իրենք իրենց գիտելիքներով գործեր են վաստակելու ու մի կերպ գոյատեւելու: Ահա թե ինչպես ենք ստեղծում «գիտելիքահենք» հասարակություն:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Գործող իշխանությունը չցանկացավ նեղացնել նախկինին»

## *Լարիսա Ալավերդյանը՝ փաստահավաք խմբի լուծարման մասին*

Փաստորեն ՀՀԿ-ն հայ իրականության մեջ միակ կուսակցությունը չէ, երբ անդամները տարբեր կարծիքներ են հայտնում որեւէ դեմքի կապակցությամբ, սակայն հետո պարզվում է, որ խմբակցությունը բացարձակ այլ տեսակետ ունի:

Դա, ինչպես փորձում են ներկայացնել պատգամավորները, կոչվում է «ազատ մտածողություն», «ազատ կարծիք»: Սակայն կա ավելի ճշմարտանման բնորոշում՝ գլուխն անտեղյակ է, թե ինչ են անում ոտքերը, ձեռքերն ու մարմնի այլ մասերը: Մոտավորապես այդպիսի իրավիճակ ստեղծվեց վերջերս նաեւ «Ժառանգություն» կուսակցությունում: «Ժառանգության» պատգամավոր Զարուհի Փոստանջյանի՝ ՀԱԿ-ի հանդեպ բուռն քննադատությունը, որ զարմացրեց շատերին, սակայն չարժանացավ ՀԱԿ-ի մեկնաբանությանը (համենայն դեպս ՀԱԿ գրասենյակից հրաժարվեցին «Ազգ»-ին մեկնաբանել Փոստանջյանի խոսքերը), հաջորդ օրը հերքեց մեկ այլ «Ժառանգական» Հովսեփ Խուրշուդյանը՝ հավելելով, որ դա ոչ թե կուսակցության, այլ պատգամավոր Փոստանջյանի անձնական կարծիքն է: Նմանատիպ կարծիք հայտնեց նաեւ «Ժառանգություն» կուսակցության քարտուղար Լարիսա Ալավերդյանը: Վերջինիս խոսքերով՝ ինքն էլ միշտ հատուկ կարծիք է ունեցել Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ ընդհանրապես բոլոր քաղաքական գործիչների նախաձեռնությունների մասին եւ դրանք մշտապես արտահայտել է: «Փոստանջյանը ազատ լինելով, հայտնել է իր դիտարկումները, ինչն օգնում է ընդհանուր առմամբ քաղաքական դաշտի կայացմանը», նկատեց Ալավերդյանը: Փաստորեն Փոստանջյանի արտահայտած կարծիքը, ըստ Ալավերդյանի, մշակված կամ ծրագրված չի եղել ո՛չ կուսակցության, ո՛չ խմբակցության շրջանակներում:



Սակայն առավել երիտասարդ պատգամավորի խոսքերը հերքելու համար չէր Ալավերդյանը հյուրընկալվել «Դե ֆակտո» մամուլի ակումբում:

Մարդու իրավունքների առաջին պաշտպանին զայրացրել է փաստահավաք խմբի լուծարումը: Ըստ նրա՝ այդ խմբի գործունեությունը կարող էր նպաստել իշխանության լեգիտիմությանը: «Թվում է, թե իշխանությունների լեգիտիմությունը պայմանավորված է միայն ընտրություններով: Իրականում իշխանությունն ամենօրյա աշխատանքով պետք է ապացուցի իր լեգիտիմությունը: Փաստահավաք խումբը կաշխատեր իշխանության հանդեպ լեգիտիմության քվեի բարձրացմանը: Սակայն լուծարումը վերադարձնում է հասարակությանը անվստահության մի մակարդակի, որը բոլորովին չի աշխատում Հայաստանը իրավական պետություն դարձնելու օգտին: Դա խոշորագույն շանսի բացթողում է», ասաց Լարիսա Ալավերդյանը:

Խորհրդարանական միակ ընդդիմադիր ուժի ներկայացուցիչը համոզված է, որ փաստահավաք խմբի երկու ներկայացուցիչները՝ Սեդա Սաֆարյանն ու Անդրանիկ Քոչարյանը կատարել են իրենց աշխատանքը: Իսկ փաստահավաք խմբի աշխատանքի դադարեցումը պայմանավորված է բացահայտվող փաստերի պարունակությամբ, որոնք մտահոգում են պետական մեքենային:

«Ինքը՝ պետական մեքենան թույլ չտվեց, որ մեկ այլ մարմին գա եւ ուղղի այն, ինչ թվում էր անուղղելի: Գործող նախագահը կաշկանդված մնաց նախկին նախագահի պարտադրած ինչ-ինչ սահմաններով, շրջանակներով, գործող իշխանությունը չցանկացավ նեղացնել նախկինին», ասաց Ալավերդյանը:

Դիտարկմանը, թե փաստահավաք խմբի 7-ամյա գործունեության ընթացքում ներկայիս իշխանությունը կարծես թե չէր անհանգստանում նախկինին «նեղացնելու» համար, Ալավերդյանը պատասխանեց. «Հույսը դրել էին երկու գործոնի վրա: Ժամանակ կանցնի, հասարակության հետաքրքրությունը կմարի, նոր ընտրություններն իրենց հետ կբերեն նոր սենսացիաներ, կստեղծվի բացասական վերաբերմունք ընդդիմադիր ուժերի նկատմամբ եւ դա հասարակությունը կմարսի: Բացի այդ, երեւի կար ինչ-որ հույս, որ խումբը լինելով 2+2+1 ձեւաչափով, չի կարողանա գալ ընդհանուր եզրակացության, ինչը տեղի չունեցավ», նշում է բանախոսը:

Անդրադառնալով համաներմանը՝ Ալավերդյանը նկատեց, որ այն չի փակելու մարտի 1-ի դրվագները: «Համաներումը պետք է լրացներ փաստահավաքի գործունեությունը, ծառայեր որպես անմեղներին ազատ արձակման հնարավորություն եւ նպաստեր մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն, բացելով արդարադատության նոր էջ», եզրափակեց Ալավերդյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# IFC-ը 5 մլն դոլար վարկ տրամադրեց «Արդշինինվեստբանկին»

Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC) երեկ «Արդշինինվեստբանկին» տրամադրեց 5 մլն դոլար վարկային գիծ՝ արտաքին առեւտրի ֆինանսավորման համար: Դրանով «Արդշինինվեստբանկն» ընդգրկվեց IFC-ի առեւտրի ֆինանսավորման գլոբալ ծրագրում (GTFP) եւ հնարավորություն ստացավ միանալու արտաքին առեւտրի ոլորտում ֆինանսական ստանդարտ ծառայություններ մատուցող միջազգային բանկերի ցանցին, որոնք նպաստում են երկրի արտաքին առեւտրի զարգացմանը:

IFC-ի վարկային գիծը հնարավորություն է ընձեռում «Արդշինինվեստբանկին» ընդլայնելու արտաքին առեւտրային գործարքների ոլորտում մատուցվող այնպիսի բանկային ծառայությունների ծավալը, ինչպիսիք են՝ ակրեդիտիվները, երաշխիքները, մուրհակները, բանկային ակցեպտները, ինչպես նաեւ այս ծառայությունների տրամադրման միջոցով նվազեցնելու միջազգային առեւտրի ոլորտում գործող հայ գործարարների առեւտրային ռիսկերը:

Պայմանագրի ստորագրման արարողության ժամանակ «Արդշինինվեստբանկի» վարչության նախագահի տեղակալ **Սերգեյ Վիրաբյանը վարկի** տրամադրումը համարեց բանկի հերթական նվաճումը: Ըստ Սերգեյ Վիրաբյանի, այն նոր հնարավորություններ է տալիս բանկի հաճախորդներին՝ օգտվելու բանկային ճկուն գործիքներից:



IFC-ի Կենտրոնական եւ Արեւելյան Ասիայի տնօրեն **Սնեժանա Ստոիլկովիչը** այս վարկային պայմանագրի ստորագրումը կարեւոր համարեց նաեւ IFC-ի համար, քանի որ կազմակերպությունը հնարավորություն է ստանում ֆինանսական ճգնաժամի այս պայմաններում նման գումար տրամադրելու «Արդշինինվեստբանկին», օգնելով փոքր ու միջին բիզնեսին՝ հաղթահարելու ճգնաժամը:

ԿԲ փոխնախագահ **Վաչե Գաբրիելյանը** կարեւորեց հայկական բանկերի եւ մասնավորապես «Արդշինինվեստբանկի» համագործակցությունը միջազգային կառույցների հետ եւ ճգնաժամի պայմաններում արտերկրից միջոցների ներգրավումը: Նա նաեւ ընդգծեց «Արդշինինվեստբանկի»՝ Հայաստանի բանկային համակարգի համակարգաստեղծ լինելու հանգամանքը:

Ա. Մ.



# «Համաներում» գործողությունը՝ ԵԽԽՎ-ում Հայաստանի հիմնական «վահան»

*1-ին էջից*

**1643 բանաձեւում ԵԽԽՎ-ը բոլոր քաղաքական ուժերին կոչ էր անում զերծ մնալ փաստահավաք խմբի աշխատանքներին միջամտելուց կամ քաղաքական գնահատականներ տալուց: Միեւնույն ժամանակ, վեհաժողովը կոչ էր անում Հայաստանի իշխանություններին երաշխավորել փաստահավաք խմբի հետ հնարավոր համագործակցությունը, բոլոր պետական մարմիններից եւ պաշտոնյաներից տեղեկատվության հասանելիությունը: Փաստահավաք խմբին պետք է տրվեին անհրաժեշտ պարզաբանումներ՝ մարտի 1-2-ին ձերբակալված, հետապնդված եւ դատապարտված անձանց վերաբերյալ:**

**Ներկա դրությամբ այդ «ողջունելի» փայլից ոչինչ չի մնացել, բացի չիրագործված նախագծից ու չկայացած աշխատանքից: Ամեն դեպքում, հունիսի 6-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի կարգադրությամբ լուծարվեց փաստահավաք խումբը՝ 2008 թ. հոկտեմբերի 23-ի՝ «Փորձագետների փաստահավաք խմբի ստեղծման եւ նրա գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելով:**

**Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Սամվել Ֆարմանյանի պարզաբանմամբ՝ «Հավատացած էինք, որ պետական պաշտոնական շրջանակներից դուրս ստեղծված եւ անկախ փորձագետներից կազմված խումբը կարող էր բավարարել հանրային ակնկալիքները եւ լուրջ աջակցություն ցուցաբերել խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովին: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ առաջադրված լինելով քաղաքական ուժերի կողմից, փաստահավաք խմբի անդամները, ցավոք, չկարողացան ձերբազատվել իրենց քաղաքական օրակարգից եւ գործել որպես իրապես անկախ փորձագետներ, հանգամանք, առանց որի ինքնին խնդրահարույց է դառնում փաստահավաք խմբի գոյությունը, ինչն էլ իր հերթին բերեց խմբի ներսում ստեղծված մթնոլորտին եւ, ըստ էության, խմբի գործունեության ձախողմանը»:**

**Ներկա դրությամբ դժվար է ասել, թե այս հանգամանքն ինչ գնահատականի ու արձագանքի կարժանանա, բայց դժվար թե «կրկին ողջունելի լինի»: Բայց թերեւս իրավիճակի «փրկություն» դառնա համաներման նախաձեռնության իրականացումը մինչեւ հունիսյան նստաշրջան:**

**Ինչեւէ, վեհաժողովը 1643 բանաձեւում նաեւ ափսոսանք էր հայտնում, որ մինչեւ վերջին պահը միայն սահմանափակ առաջընթաց էր եղել ՀՀ իշխանությունների կողմից պահանջների կատարման առնչությամբ, մասնավորապես, որ հակառակ վեհաժողովի պահանջների, հետապնդման գործերի եւ դատապարտումների զգալի մասը հիմնված է եղել միայն ոստիկանների ցուցմունքների վրա՝ առանց հիմնավորված փաստերի, եւ շատ քիչ են Հայաստանի քր. օր.-ի 225-րդ եւ 300-րդ հոդվածներով նախատեսված մեղադրանքներից հրաժարվելու դեպքերը:**

**Այս առնչությամբ կարծես թե առաջընթաց արդեն ունենք, գոնե օրենսդրական փոփոխությունների ու մեղադրանքների առումով: Բայց դա էլ թերեւս բավարար լինելուց հեռու է, հատկապես որ ձերբակալությունների թեման մնում է հիմնական «թիրախը» ԵԽԽՎ սպասվող նիստում Հայաստանի հարցի քննարկման ժամանակ, եթե, իհարկե, մինչ այդ չհասցնեն իրագործել «համաներում» գործողությունը, որից ձերբակալվածների հարցի սկզբնական լուծումը գոնե կարող է բավարարել ԵԽԽՎ բանաձեւի պահանջների մի մասը:**

**Դժգոհ մնալով 2008-ի մարտի 1-2-ի դեպքերի հետ կապված ազատազրկման մեջ հայտնված մարդկանց իրավիճակից, այնուամենայնիվ վեհաժողովը 1643 բանաձեւում նշել էր, որ Ազգային ժողովի վերջին նախաձեռնությունը՝ ԵԽ-ի չափանիշներին համապատասխան քրեական օրենսգրքի 225-րդ եւ 300-րդ հոդվածների վերանայումը, ներում շնորհվածների թիվը, նաեւ անկախ, թափանցիկ եւ վստահելի հետաքննություն կազմակերպելու դրական քայլերը պետք է համարվեն 1609 եւ 1620 բանաձեւերի կատարմանն ուղղված Հայաստանի իշխանությունների պատրաստակամություն:**

**Հունիսի 5-ին Փարիզում տեղի ունեցավ ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի նիստը՝ Հայաստանի հարցի քննարկմամբ: Հայաստանի հարցով համազեկուցողներ Ժորժ Կոլոմբիեն եւ Ջոն Պրեսկոտը գրավոր զեկույց են ներկայացրել՝ իրենց գնահատականներով ու մեկնաբանություններով, սակայն առանց եզրակացության, որը ըստ էության հենց կարող է լինել ԵԽԽՎ-ի ամառային նիստում քննարկվելիք բանաձեւի նախագիծը: Դրան վեհաժողովը կանդրադառնա, ըստ ԵԽԽՎ օրակարգի նախագծի, հունիսի 24-ին, իսկ մինչ այդ հունիսի կեսերին Հայաստան կայցելեն համազեկուցողները:**

**Հայաստանի հարցը մոնիտորինգի հանձնաժողովի փարիզյան նիստում Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության մի քանի ոլորտների գնահատում է ենթադրել, որ կարող են դառնալ Հայաստանի առնչությամբ ընդունելիք բանաձեւի դրույթներ: Նախ, հանրահավաքների եւ ցույցերի անցկացման օրենքի վերանայման խնդիրն է դրվում, ապա՝ մարտի 1-ի դեպքերի անկախ քննության անցկացումը, նույն համատեքստում նաեւ բռնարարքներին չառնչվող ձերբակալվածների ազատ արձակումը եւ այդպես էլ չիրագործվող ու չկայացող երկխոսության խնդիրը:**

**Երկխոսության առումով ակնհայտ է, որ ընդդիմությունը դրան գնալ չի ցանկանում ու հաստատապես այդպես չի վարվի մինչեւ հունիսի 24-ը: Ինչ մնում է համաներմանը, ապա սա արդեն կարծես օրերի խնդիր է եւ հետքայլ չի ենթադրում: Մարտի 1-ի իրադարձությունների անկախ քննությունն էլ դժվար իրագործելի է, նկատի ունենալով հայաստանյան արդարադատությունը: Ինչ վերաբերում է օրենսդրական փոփոխություններին, ապա այդպիսիք ինչքան ասես կարելի է իրականացնել, սակայն հետո կաշխատե՞ն այդ փոփոխված դրույթները, թե ոչ՝ այլ հարց է:**

# Արտահայտման ազատությունը՝ 6 վավերագրական ֆիլմերում

**Վեց վավերագրական ֆիլմեր կներկայացնեն արտահայտման ազատության խնդիրները Հայաստանում: «Եվրասիա» համագործակցության հիմնադրամը Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացնում է «Արտահայտման ազատության արմատավորումը Հայաստանում» ծրագիրը, որի շրջանակներում էլ աջակցություն է ցուցաբերվել 6 ֆիլմերի ստեղծմանը:**

**Դրանք են Արա Շիրինյանի «Զուգահեռ իրականություն», Տիգրան Խզմալյանի «Արմենիա մինուս Ա1 պլյուս», Սուրեն Տեր-Գրիգորյանի «Ներթափանցում», Սուսաննա Օհանջանյանի «Արտահայտման ազատություն եւ ազգային անվտանգություն», Դավիթ Մաթեւոսյանի «Ռոք արտի՞ստ, քաղաքացի՞, աշխարհաքաղաքացի՞» եւ Արմեն Եփրեմյանի «SOS» գերակա շահի անժամկետ պատանդներ» ֆիլմերը:**

**Հունիսի 13-ից ամեն շաբաթ «Երկիր մեդիա» հեռուստաալիքի եթերում կլինի նաեւ ծրագրի մաս կազմող «Հոդված 27, արտահայտման ազատության իրավունք» հաղորդաշարը, որի ընթացքում կցուցադրվեն վավերագրական ֆիլմեր եւ կքննարկվեն արտահայտման ազատությանն առնչվող հարցեր:**

**Ա. Հ.**

# Չկա չարիք առանց բարիքի

## *Մոռացությունը միշտ վտանգավոր է*

«Արմենիա» նոր առագաստանավը իսպանական Վալենսիա նավահանգստում էր, եւ մենք ստիպված էինք մեր ամբողջ բեռն այնտեղ ուղարկել մեկնումից երկու ամիս առաջ: Մեզ օգնեցին ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունը եւ «Ապավեն» փոխադրական ընկերությունը: Մեկնարկից երկու շաբաթ առաջ բեռները պետք է լինեին Վալենսիայում, բայց պարզվեց, որ դրանք Մալագա նավահանգստում կլինեն մայիսի 27-ին՝ մեկնարկի նախօրեին:

Մեկնարկը հետաձգել չէր կարելի: Կազմակերպչական մեծ աշխատանք կատարեցին Իսպանիայում ՀՀ դեսպան Միհեր Բաղալյանը, տեղի հայ համայնքի ղեկավար Վազգեն Հակոբյանը: Ի վերջո պարզվեց, որ բեռը ոչ թե Մալագայում է, այլ Ջիբրալթարից մեկ մղոնի վրա՝ Ալխեսիրաս նավահանգստում: Բայց օրենքն արգելում է այնտեղ կանգնել: Կարելի է միայն վճարել, բեռները վերցնել եւ շարունակել նավարկությունը դեպի Ատլանտյան օվկիանոս: Մենք Իսպանիայի իշխանություններին երախտապարտ ենք արդեն, որ նրանք մեզ ընդառաջեցին եւ ընդամենը մեկ օրում ձեւակերպեցին բեռների վճարումների եւ նավ տեղափոխելու փաստաթղթերը:

Տհաճ եղանակ էր, ուժեղ քամի էր փչում, նավը ճոճվում էր, եւ երկար կանգնելը պարզապես անհնար էր ու վտանգավոր: Ստացել էինք երկուսուկես տոննա բեռներ, այդ թվում՝ գրքերով ու սարքերով լի ծանր արկղեր:

Ուղեբեռի հետ կապված դեգերումներից հետո մեր բախտը բերեց: Հիրավի, չկա չարիք առանց բարիքի: Հյուրընկալ Սեուտեում ամեն ինչ դասավորեցինք ինչպես հարկն է: Արիկը երեք օր զբաղվեց «Իրիդիումով», որը օվկիանոսում մեզ կծառայի որպես հեռախոս եւ նույնիսկ ինտերնետ:

Աֆրիկայի հյուսիսարեւմտյան ափերի մոտ գտնվող Կանարյան արշիպելագը արժեր տեսնել: «Մեսրոպ Մաշտոց» գիտարշավը պետք է ավարտվի մեկ տարում: Ժամանակը սուղ է: Սակայն Կանարյան կղզիները շրջանցելը մեղք կլիներ՝ թեկուզ այն պատճառով, որ վեց տարի առաջ՝ 2003-ի հոկտեմբերին արշիպելագի Լա Պալմա կղզում բարձրացվել է Հայաստանի պետական դրոշը: Առիթը ոչ թե օլիմպիական ոսկին էր, այլ ոչ պակաս արժեքավոր մի ուրիշ բան՝ գիտությունը:

Այն ժամանակ Լա Պալմայում հանդիսավոր պայմաններում բացվեց մի եզակի աստղադիտակ, որի օգնությամբ արդի աստղաֆիզիկայի նոր ուղղությունը՝ այսպես կոչված գամմա-աստղագիտությունը, կարող է տիեզերքի խորքերում ի հայտ բերել գամմա-ճառագայթման հզոր աղբյուրներ, գերնոր եւ նոր օբյեկտների պայթյուններ: Ես տեղյակ եմ, որ Ղրիմի աստղադիտարանում գերբարձր էներգիայի գամմա-աղբյուրների առաջին կանոնավոր դիտարկումները իրականացրել է մեր հայրենակից Առնոլդ Ստեփանյանը դեռ 1969 թվականին: Հայաստանում 80-ականների վերջերին նոր սերնդի փոքր աստղադիտակ է կառուցել Ռազմիկ Միրզոյանը, որը հետագայում դարձավ աշխարհի ամենամեծ աստղադիտակի՝ «Մաջիկ գամմա տելեսկոպի» ղեկավարը: Նախագծին մասնակցում էին Եվրոպայի եւ Ասիայի 11 երկրների 20 ինստիտուտների գիտնականներ, եւ Հայաստանը միակ մասնակիցն էր նախկին ԽՍՀՄ հանրապետություններից: Երկրների միավորման մշտական անդամ է Երեւանի ֆիզիկայի ինստիտուտը պրոֆեսոր Աշոտ Չիլինգարյանի գլխավորությամբ:

Դեռ Վալենսիայում ես երկարատեւ որոնումներից հետո գտա հայ անվանի գիտնական Վարուժան Դանիելյանին՝ գիտական հետազոտությունների սարքերի հեղինակին: Նա էր մշակել 2003-ին գործարկված վերոհիշյալ եզակի աստղադիտակի էլեկտրոնային մասը: Ես նաեւ պարզեցի, որ այսօր այլեւս ոչ ոք չգիտի գամմա-աստղադիտակի զարգացման մեջ հայ գիտնականների ներդրած ավանդի մասին:

Մոռացությունը մեզ մոտ դառնում է տխուր ավանդույթ: Մոռացվեց ականավոր աստղաֆիզիկոս եւ փիլիսոփա Գրիգոր Գուրզադյանը: Այսօր քչերը գիտեն, որ 70-ականների սկզբներին թնդում էին հնօրյա Գառնիի եւ այնտեղ ստեղծված տիեզերական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Գրիգոր Արամի Գուրզադյանի անունները: 1973-ի դեկտեմբերին նա տիեզերք արձակեց իր «Օրիոն-2» արտամթնոլորտային աստղադիտարանը:

Օրերս ես կորցրի (այդպես անվանենք ճանապարհային գողությունը) իմ հնամաշ «դիպլոմատը», որտեղ կային շատ արժեքավոր բաներ՝ անձնագիր, նոթատետր, իմ հեռախոսագիրքը մոտ հազար համարներով եւ այլն: Բայց ամենացավալին այն է, որ ես առհավետ կորցրի գրառումներիս գրքույկը, որի մեջ մի քանի ամիս գրի էի առել Գրիգոր Գուրզադյանի հետ իմ երկխոսությունները ամենատարբեր թեմաներով: Դրանք անգին գրառումներ էին: Հայ ընթերցողը լավ ծանոթ է գիտնական եւ նկարիչ Գուրզադյանի փիլիսոփայական էսյուդներին: Նա ներկայումս բացարձակապես կույր մարդ է եւ մի կերպ լսում է լսողական սարքի միջոցով:

Գուրզադյանը ութսունութ տարեկան է: Թող Աստված նրան երկար կյանք տա, իսկ մեզ՝ շուրջերկրյա նավարկության հաջող ավարտ, որպեսզի վերսկսենք մեր երկխոսությունները: Մինչ այդ հարկավոր է պարզապես պայքարել մեզ համար ինչ-որ համաճարակ դարձած մոռացության դեմ:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**





***«Արմենիա» առագաստանավի անձնակազմը Սեուտեի (Իսպանիա) նավահանգստի քարափից նավ է տեղափոխում ուղեբեռները:***

«ՈՎ Է ՈՒԶՈՒՄ ԴԱՌՆԱԼ ՄԻԼԻՈՆԱՏԵՐ»

# Վրիպակը՝ «ճիշտ» տարբերակ

Հունիսի 5-ին «Շանթ» հեռուստաընկերության եթերում հերթական թողարկումն էր «Ով է ուզում դառնալ միլիոնատեր» հեռուստախաղի, որը վարում է Հակոբ Ռուբինյանը՝ լավագույն հայ հեռուստալրագրողներից ու հանդիսավարներից մեկը: (Առիթը եկել, ուզում եմ ասել, որ նրա բանավոր խոսքը միշտ աչքի է ընկել մաքրությամբ, իսկ կանոնավոր ու գեղեցիկ հայերենն ստիպել է, որ հեռուստաեթերում միմյանց հետ հենց այդկերպ հաղորդակցվեն բոլոր նրանք, ովքեր մասնակիցն ու ականատեսն են նրա վարած որեւէ հանդիսանքի):

Նշված հեռուստախաղը, որ կառուցված է հարցի եւ դրան տրվելիք 4 հնարավոր պատասխաններից մեկի ընտրության սկզբունքով, թեեւ գրեթե ամբողջությամբ պատճենված է օտարներից, այնուամենայնիվ մնում է հայաստանյան եթերներում սփռվող լավագույն խաղերից մեկը՝ շնորհիվ ինտելեկտուալ հագեցվածության եւ, կրկնեմ, Հակոբ Ռուբինյանի հանդիսավարական հմտության:

Սակայն մեր արձագանքի թեման այլ է:

Նշված օրվա թողարկման ժամանակ մասնակիցներից մեկին առաջարկվեց ճիշտ լրացնել Հովհ. Թումանյանի քառյակներից մեկի բաց թողնված հատվածը.

**Երկու դարի արանքում,**<br>
**Երկու քարի արանքում,**<br>
**Հոգնել եմ նոր ընկերի**<br>
**Ու ...... արանքում:**

Առաջարկվեցին հետեւյալ տարբերակները՝ «նոր դավի», «հին ցավի», «հին ընկերի», «երկու դարի»: Խաղի մասնակիցն ընտրեց պատասխանի սխալ մի տարբերակ, որին բնականորեն հետեւեց ճիշտ պատասխանը՝ «հին ցավի»: Ինչպես միշտ, Հ. Ռուբինյանը խաղի մասնակցի ու նաեւ հեռուստադիտողի համար հիմնավորեց այդ պատասխանը՝ մասնավորապես հիշելով, որ ուսանողական տարիներին ինքը շարադրություն է գրել Թումանյանի ստեղծագործության մեջ սոցիալական ցավի առկայության մասին, ապա նաեւ շեշտեց, թե այս քառյակում նույնպես խոսք կա ցավի մասին: Հարգելի հանդիսավարին բնավ չմտահոգեց այն հանգամանքը, որ քառյակի պակասող հատվածը լրացնելով «հին ցավի» արտահայտությամբ՝ ստանում ենք այնպիսի ոչ ճշգրիտ հանգեր (դարի - քարի - ցավի), որ ամենեւին բնորոշ չեն քառյակի ժանրին ընդհանրապես եւ Թումանյանի քառյակներին մասնավորապես: Չմտահոգեց նաեւ, որ «հին ցավը» քառյակի տրամաբանության մեջ էլ չի տեղավորվում, եւ շատ դժվար է պատկերացնել, թե բանաստեղծը, որ հոգնել կարող է համանման բաների՝ երկու դարի, երկու քարի արանքում, ինչպես կարող է հոգնել իրարից միանգամայն հեռու եւ համեմատության ոչ մի եզր չունեցող բաների՝ ընկերի եւ ցավի «արանքում» (՞):

Սակայն Թումանյանի քառյակը, ինչպես եւ պետք է լիներ, կատարյալ է, եւ կատարյալ է ոչ միայն հանգաբանական առումով. այլեւ տրամաբանության տեսակետից: Բանն այն է, որ պակասող հատվածը պետք է լինի ոչ թե «հին ցավի», ինչպես ներկայացվեց հեռուստախաղում, այլ՝ «հին ցարի»: Ուրեմն՝ բանաստեղծի հոգնությունը ոչ միայն սոցիալական է կամ էլ պայմանավորված իր ժողովրդի անելանելի վիճակով. նրա հոգնությունը նաեւ քաղաքական է. բանաստեղծը հոգնել է «նոր ընկերի»՝ բոլշեւիկի եւ «հին ցարի» արանքում (քառյակը գրվել է 1917-ի հունվարին): Այս երկու նշվածները՝ բոլշեւիզմ եւ ցարիզմ, միանգամայն համեմատելի բաներ են, որոնց «արանքում» բանաստեղծը կարող էր եւ հոգնել:

Քառյակի փոքր-ինչ ուշադիր ընթերցումը, անշուշտ, կասկած կառաջացներ (վրիպակն առկա է Հովհ. Թումանյանի ընտիր երկերի 1-ին հատորում, Երեւան, 1985, էջ 150: Ամենայն հավանականությամբ, այս հրատարակությունից էլ օգտվել են հեռուստախաղի կազմակերպիչները), իսկ համեմատությունը քառյակի այլ (օրինակ՝ Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հատոր 2, էջ 12, Երեւան. 1991) հրատարակությունների հետ անկասկած երեւան կբերեր վերոնշյալ վրիպակը՝ բացառելով դրա ակամա տարածումը:

**ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Հ.Գ. Կարծում եմ, միանգամայն արդարացի կլինի, եթե «Ով է ուզում դառնալ միլիոնատեր» հեռուստախաղի հունիսի 5-ի մասնակցին հնարավորություն տրվի շարունակելու խաղն այն կետից, որտեղ սխալվել են խաղի երկու կողմերն էլ՝ թյուրիմացաբար:*

### *ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ*

**Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության հաղորդագրությունը Իրանի նախագահական ընտրությունների մասին**

Հայտնում ենք, որ հունիսի 12-ին Իրանում եւ արտերկրում տեղի են ունենալու Իրանի Իսլամական Հանրապետության տասներորդ նախագահական ընտրությունները: Այդ ընտրություններին մասնակցում են Պահապան Խորհրդի կողմից հաստատված չորս թեկնածուներ՝ պարոնայք Մահմուդ Ահմադինեժադը, Սեյեդ Միր Հոսեյն Մուսավի Խամենեն, Մեհդի Քյարուբին եւ Մոհսեն Ռեզայի Միր Ղաեդը:

Հայաստանում գտնվող եւ ընտրելու իրավունք ունեցող բոլոր իրանցիներին հրավիրում ենք մասնակցելու ընտրություններին՝ որպես կրոնական եւ ազգային պարտականության իրագործում:

Այդ նպատակով դեսպանության տարածքում (Երեւան, Կոմիտասի պողոտա, Բուդաղյան 1 հասցեում) տեղակայվելու է ընտրատեղամաս, որն առավոտյան 08:30-ից տասը ժամ տեւողությամբ պատրաստ է ընդունել ընտրողների քվեները:

# Պաղեստին-Իսրայել հակամարտության կարգավորման նոր ծրագիր

## *Նախագահ Օբամայի առաջադրած այս ծրագրի հիմքում երկու անկախ պետականության սկզբունքն է*

Հունիսի 4-ին Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում իսլամական աշխարհին դիմեց ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման: Ուղերձում նա ասաց, որ փոխգործակցության նոր եզրեր գտնելու համար եկել է Կահիրե եւ ոչ մի ճառով չի հաղթահարվի տարիների վաղեմություն ունեցող անվստահությունը: Օբաման միաժամանակ անդրադարձավ պաղեստինա-իսրայելական հակամարտությանը եւ նշեց. «Մերձավոր Արեւելքում խաղաղության ուղին անցնում է երկու առանձին պետությունների առկայությամբ: «Համասը» պետք է ճանաչի Իսրայելին եւ հրաժարվի բռնություններից, իսկ Իսրայելը՝ վերջ տա վերաբնակների համար նոր բնակավայրերի կառուցմանը»: ԱՄՆ նախագահը նաեւ ընդգծեց, որ Իրանը խաղաղ նպատակով միջուկային էներգիա ձեռք բերելու իրավունք ունի:

Այլ կերպ, նախագահ Օբամայի ուղերձը նպատակամղված էր իսլամական աշխարհի հետ ԱՄՆ-ի հարաբերությունների բարելավմանը եւ ուներ Մերձավոր ու Միջին Արեւելքում լարվածությունը թուլացնելու միտում, հետեւաբար միանգամայն համապատասխանում էր նրա նախընտրական խոստումներին եւ գլխավորը՝ անկեղծ էր: Անկեղծությունը ԱՄՆ-ի նկատմամբ իսլամական աշխարհի անվստահության վերացման, տարածաշրջանում լարվածության թուլացման թերեւս ամենակարեւոր երաշխիքն է: Հենց դրանով են պայմանավորվում Դամասկոսի եւ Թեհրանի հետ դիվանագիտական ակտիվ շփումներ ծավալելու Վաշինգտոնի ձեռնարկումները, որոնց մասին «**Ազգը**» նշել էր դեռեւս հունիսի 5-ի համարում:

Օբամայի ուղերձին հետեւեցին հունիսի 6-ի խորհրդարանական ընտրությունները Լիբանանում: Հակառակ ենթադրություններին, ընտրություններում հաղթեց Սաադ Հարիրիի գլխավորած «Մարտի 14» դաշինքը, ստանալով պատգամավորական 128 տեղերից 71-ը: «Մարտի 14» դաշինքի գլխավոր աջակիցը Սաուդյան Արաբիան է, որին էլ այդ հարցում խրախուսում է Վաշինգտոնը: Թերեւս այդ առումով պատահական չէր ընտրությունների նախօրյակին ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենի գործուղումը Բեյրութ, առավել եւս նրա հրապարակային հայտարարությունը, թե անելու են այն ամենը, ինչ անհրաժեշտ է ձախողելու համար «Հզբոլլահի» հաղթանակը ընտրություններում:

Ըստ երեւույթին, Վաշինգտոնը հետամուտ է եղել Բայդենի խոսքերին, որ ընտրություններում հաղթանակի գլխավոր հավակնորդ «Մարտի 8» դաշինքը, որի առանցքն է կազմում Իրանի եւ Սիրիայի աջակցությունը վայելող «Հզբոլլահը», պատգամավորական ընդամենը 57 մանդատ ստացավ: Թեեւ Լիբանանի խորհրդարանական ընտրություններում «Մարտի 14» դաշինքի հաղթանակով նշանավորվեց Իրանի հետ ընտրությունների շուրջը ծավալվող մրցապայքարում ԱՄՆ-ի հաղթանակը, սակայն եթե արդյունքները չեն արտացոլում ընտրողների կամքը, ապա դա չի չեզոքացնի երկրում քաղաքացիական պատերազմի սպառնալիքը:

Դա ենթադրում է Լիբանանում լարվածության պահպանումը: Մանավանդ որ Սաադ Հարիրին իր հոր՝ Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության համար փոխանակ ԱՄՆ-ի նախկին փոխնախագահ Դիկ Չեյնիին մեղադրի, շարունակում է մեղադրել Սիրիային, որ ապավինի սպանության բուն կազմակերպիչների անվերապահ աջակցությանը: Մինչդեռ Ռաֆիկ Հարիրիի սպանությունը հանգեցրել էր սիրիական զորքերի դուրսբերմանը Լիբանանից: Կազմակերպել այդ սպանությունը, Սիրիայի տեսանկյունից ենթադրում էր ինքնակամ վերջ տալ ռազմական ներկայությանն այդ երկրում, ուստի միանգամայն անտրամաբանական է եւ Սաադն ինքը չէր կարող չիմանալ այդ մասին:

Որքան էլ Սաադ Հարիրին չհավակնի Լիբանանի վարչապետի պաշտոնին, Սիրիային գիտակցաբար մեղադրելու հարկադրանքի տակ լարվածության հավելյալ պատճառ է ստեղծում երկրում: Դա ընդլայնում է Ռաֆիկ Հարիրիի սպանությունը որպես ազդեցության լծակ օգտագործելու միջոցով Սիրիային ճնշելու միջազգային ուժերի հնարավորությունները, որն էլ հակասում է տարածաշրջանում լարվածության թուլացման նախագահ Օբամայի ջանքերի տրամաբանությանը: Այս ամենն, ինչ խոսք, անհետեւանք չի անցնի Իրանի համար, իսկ այդ դեպքում արդեն ձախողման սպառնալիքի տակ կդրվի Թեհրանի հետ հարաբերությունները բարելավելու Վաշինգտոնի նախաձեռնությունը:

Մերձավոր եւ Միջին Արեւելքը խճճված հակամարտություններով թերեւս աշխարհի ամենաբարդ տարածաշրջանն է: Դրանցից ամենախճճվածն էլ պաղեստինա-իսրայելական հակամարտությունն է: Առանց դրա կարգավորման անհնար է տարածաշրջանի լարվածության էապես թուլացումը: Ահա թե ինչու Պաղեստին-Իսրայել հակամարտությունը երկու անկախ պետականության սկզբունքով առաջիկա երկու տարում կարգավորելու ծրագիր է առաջ քաշել նախագահ Օբաման: Նա այդ ծրագիրը, ինչպես հունիսի 9-ին նշում է Turkishny.com կայքէջը, վերջերս ներկայացրել է Իսրայելին եւ Եգիպտոսին:

Լոնդոնում հրատարակվող արաբական «Աշ շարք ալ աուսաթ» թերթի վկայությամբ, ծրագրի մասին իրազեկվել է նաեւ Պաղեստինի ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբբասը: Ընդ որում, հունիսի 10-ին իրազեկման համար Կահիրե է հրավիրվել նաեւ Իսլամական դիմադրության շարժման՝ «Համասի» քաղբյուրոյի ղեկավար Խալեդ Մաշալը, որտեղ նա, թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, մամուլի ասուլիսում անդրադարձել է նախագահ Օբամայի իսլամական աշխարհին հղած ուղերձին: Մաշալը մասնավորապես ասել է. «Այսրհորդանանում հրեա վերաբնակների համար նոր բնակավայրերի կառուցումը դադարեցնելու Օբամայի պահանջը չափազանց կարեւոր քայլ է: Մնում է, որ նա իրական ճնշում գործադրի Իսրայելի վրա»:

Եթե նախագահ Օբամայի վերջին ձեռնարկումները համապատասխանում են տարածաշրջանում լարվածությունը թուլացնելու նախընտրական խոստումներին, Իսրայել-Պաղեստին հակամարտության կարգավորման նոր ծրագիրն էլ բխում է նրա իսլամական աշխարհին հղած ուղերձի տրամաբանությունից: Միայն թե, անհարկի միջամտությունները չխթանեն Բարաք Օբամայի նախաձեռնությունները, ինչպես, ասենք, Լիբանանի խորհրդարանական ընտրություններին փոխնախագահ Բայդենի ուղղակի միջամտությունն էր:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Բրիտանացի կուսակցապետի վրա ձվեր նետեցին

Մեծ Բրիտանիայի Ազգային կուսակցության առաջնորդ Նիկ Գրիֆֆինը ստիպված է եղել կիսատ թողնել մամլո ասուլիսը եւ հեռանալ, քանի որ ցուցարարները ձվեր են շպրտել քաղաքական գործչի վրա: Տվյալ միջադեպի մասին հաղորդում է «Դեյլի նյուզ» թերթը:

Օրերս Մեծ Բրիտանիայում եւ Եվրոմիության մի շարք այլ երկրներում անցկացված Եվրոխորհրդարանի ընտրություններում Գրիֆֆինի կուսակցությունը պատգամավորական երկու տեղ է ստացել: Կուսակցապետը Լոնդոնում՝ Լորդերի պալատի մոտ հասցրել է մի քանի րոպե շփվել լրագրողների հետ: Հետո մոտեցել են ցուցարարներ՝ ձեռքերին «Կորիր, նացիստ տականք» եւ «Կանգնեցրեք նացիստներին» պաստառներ: Գրիֆֆինի վրա նետված ձվերից մի քանիսը դիպել են նրան: Թիկնապահները քաղաքական գործչին ուղեկցել են մինչեւ ավտոմեքենա, եւ նա աճապարանքով մեկնել է, կիսատ թողնելով զրույցը լրագրողների հետ:



Մեծ Բրիտանիայի Ազգային կուսակցությանը կարող են անդամագրվել միայն սպիտակամորթները: Կուսակցությունը հանդես է գալիս ներգաղթի արգելման օգտին: Որոշ մասնագիտությունների տեր մարդկանց, մասնավորապես ոստիկաններին եւ ուսուցիչներին, արգելված է լինել Ազգային կուսակցության շարքերում:

ԱՄՆ-ՌԴ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# Չի բացառվում հակահրթիռային համակարգի տեղաբաշխումը ՌԴ տարածքում

## *Ռոբերտ Գեյթսը լավատես է*

**Ռուսաստանը սկսել է նորովի գնահատել Իրանից բխող հրթիռային վտանգը եւ մեղմացրել է դիրքորոշումը հակահրթիռային պաշտպանության զարգացման ամերիկյան ծրագրերի նկատմամբ: Երկկողմ քննարկումների ընթացքում տեղի ունեցած առաջընթացի մասին հայտարարել է ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը Ասոշիեյթեդ պրես գործակալությանը տված հարցազրույցում:**

**Պենտագոնի ղեկավարի խոսքերով, ներկայումս քննարկվող նախագծերից մեկը վերաբերում է Ռուսաստանում հակահրթիռային պաշտպանության օբյեկտների տեղաբաշխմանը:**



**Վաշինգտոնը ծրագրում է հակահրդեհային օբյեկտներ տեղադրել Արեւելյան Եվրոպայում: Դա պատճառաբանվում է Իրանի հնարավոր հրթիռահարվածներից եվրոպացիներին իբր պաշտպանելու անհրաժեշտությամբ: Ռուսաստանը մինչեւ վերջերս կասկածանքով էր նայում այդ փաստարկին եւ իր սահմանների մոտակայքում հակահրթիռային համակարգի տեղաբաշխումը համարում էր թշնամական քայլ:**

**Ռոբերտ Գեյթսը երեկ Սենատում ասել է, որ ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի հետ իր վերջին հանդիպումներից մեկի ժամանակ վարչապետը ներկայացրել է ՌԴ հատուկ ծառայությունների եզրակացությունը, ըստ որի իրանցիները առաջիկա տասնամյակում չեն կարողանա ստեղծել մինչեւ Արեւմտյան Եվրոպա թռչող հրթիռներ:**

**«Փաստն այն է, որ ռուսները նորից հանդիպեցին մեզ հետ, ընդունեցին մեր իրավացիությունը եւ իրենց սխալը Իրանի հրթիռային սպառնալիքի հարցում: Ուստի հույս ունեմ, որ կկարողանանք էլ ավելի առաջ շարժվել», ասել է Գեյթսը:**

**Նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը երեքշաբթի օրը հետաձգեց Լեհաստանում եւ Չեխիայում հակահրթիռային համակարգի տարրերի տեղաբաշխումը, որը ծրագրված է Ջորջ Բուշի վարչակազմի օրոք: Այն ժամանակ Մոսկվան կտրականապես դեմ էր համակարգին: Գեյթսի խոսքերով, այժմ երկու կողմերը փոքր-ինչ մոտեցել են փոխզիջման:**

**Վաշինգտոնում փոխզիջման հնարավորության մասին անցյալում եւս խոսվել էր: Մարտին մամուլում հայտնվել էին հաղորդումներ, թե Օբաման գործարք է առաջարկել ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւին: Հակահրթիռային համակարգի հարցում ԱՄՆ-ի զիջումների դիմաց Ռուսաստանը պետք է Իրանի վրա ճնշում գործադրեր նրա միջուկային ծրագրի արգելակման նպատակով:**

**Ընդսմին պնդում են, թե ԱՄՆ-ը ձգտում է Մոսկվային «լիարժեք գործընկեր» դարձնել հակահրթիռային համակարգի ստեղծման գործում:**

**Համակարգի հարցում Ռուսաստանի դիրքորոշման փոփոխման առնչությամբ Մոսկվան առայժմ մեկնաբանություն չի արել:**

# Գուանտանամոյի կալանավորի առաջին դատը

**Գուանտանամոյի ռազմակայանի կալանավոր Ահմեդ Ղայլանին առաջին բանտարկյալն է, որին երեկ ԱՄՆ տարածք են տեղափոխել Մանհեթենի դաշնային դատարանում դատելու համար: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ նա մեղադրվում է Քենիայում եւ Տանզանիայում ԱՄՆ դեսպանատներում ահաբեկչությունների կազմակերպմանը մասնակից լինելու մեջ: Ղայլանին իրեն անմեղ է համարում:**

**Ահմեդ Ղայլանին «Ալ Ղաիդայի» անդամ է եւ Գուանտանամոյի բանտ է բերվել 2006 թվականին: 1998-ին Քենիայում եւ Տանզանիայում ամերիկյան դեսպանատներում կազմակերպված ահաբեկչությունների հետեւանքով զոհվել է 224 մարդ, այդ թվում՝ 12 ամերիկացի:**

**Ֆրանսպրես գործակալության տվյալներով, դատելու նպատակով Գուանտանամո կղզուց ԱՄՆ տարածք է տեղափոխվելու եւս երեք կալանավոր: Նրանցից մեկը՝ Ալժիրի քաղաքացի, 39-ամյա Սաբեր Լահմարը ձերբակալվել է 2001-ին Բոսնիայում: Դատվող մյուս երկու կալանավորների անունները առայժմ չեն հրապարակվել:**

**2009-ի հունվարին ԱՄՆ նախագահի պաշտոնը ստանձնելով՝ Բարաք Օբաման խոստացավ Գուանտանամոյի բանտը փակել մեկ տարվա ընթացքում: Ենթադրվում է, որ Գուանտանամոյում դեռեւս պահվող կալանավորները կտեղափոխվեն ամերիկյան բանտեր, իսկ նրանց գործերը կքննվեն ԱՄՆ դատարաններում:**

# Նիգերիայի զրոհայինները հրդեհել են Chevron-ի նավթաշտարակը

**Նիգերի գետաբերանի ազատագրման շարժման զրոհայինները երեկ հրդեհել են ամերիկյան Chevron ընկերության նավթաշտարակներից մեկը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Զրոհայինների տարածած հայտարարության մեջ նշվում է, որ հարձակման թիրախ է դարձել Նիգերի գետաբերանում գտնվող Otunana նավթահարթակը: Chevron-ի պաշտոնական ներկայացուցիչն ասել է, թե այդ լուրի հավաստիությունը ստուգվում է: Նա հրաժարվել է հավելյալ մեկնաբանություններից:**

**Մայիսի կեսերին Նիգերիայի կառավարական ուժերը լայնածավալ հարձակում սկսեցին Նիգերի գետաբերանի ազատագրման շարժման զրոհայինների դեմ: Զրոհայինները զենքի կոչեցին իրենց կողմնակիցներին եւ երկրում գործող օտարերկրյա ընկերություններից պահանջեցին ամենաատեղծ ժամկետներում դադարեցնել գործունեությունը: Մայիսի վերջերին զրոհայինները խափանեցին Chevron-ի հինգ պոմպակայանների աշխատանքը, որից հետո ամերիկյան ընկերությունը ստիպված եղավ Նիգերիայում նավթի հանույթը կրճատել՝ հասցնելով օրական 100 հազար բարելի:**

**Նիգերի գետաբերանի ազատագրման շարժումը պահանջում է, որ Նիգերիայում նավթահանույթի ընդհանուր ծավալի մեջ վերազգային ընկերությունների բաժինը կրճատվի, իսկ կառավարությունը ստացվող եկամուտներից ավելի շատ միջոցներ հատկացնի տեղաբնակների կենսապայմանների բարելավմանը: Իրենց նպատակներին հասնելու համար զրոհայինները քանիցս խափանել են օտարերկրյա ընկերությունների աշխատանքը, սպանել դրանց աշխատակիցներին:**

# Հայկական պատվիրակությունը Կաննի կինոփառատոնում ուշադրության է արժանացել ու զարմանք հարուցել

Հայաստանն առաջին անգամ ներկայացել է Կաննի կինոփառատոնի կինոշուկայում՝ համեստագույն տաղավարով եւ վերջին երեք տարիներին նկարահանված 30 ֆիլմով: Մեր կինեմատոգրաֆիստների աշխատանքն առաջացրել է սպասվածից շատ ավելի մեծ հետաքրքրություն, ինչը փառատոնում հայկական պատվիրակության ղեկավար, ազգային կինոկենտրոնի ղեկավար Գեւորգ Գեւորգյանի հավաստմամբ, արդյունք է աշխարհի տարբեր երկրների կինոստուդիայում աշխատող հայ կինեմատոգրաֆիստների ուշադրությամբ: Մասնակցության արդյունքը տարբեր կարգի համագործակցության շուրջ 30 առաջարկներն են մի քանի երկրների կինոփառատոնների կողմից:

Գերմանական մի կազմակերպություն հետաքրքրվել է Վիգեն Չալդրանյանի «Քմուհին», Հարություն Խաչատրյանի «Սահմանը», Ալբերտ Մկրտչյանի «Տխուր փողոցի լուսաբացը» ֆիլմերով, Ասիական կինոփառատոնի կազմակերպիչներն էլ հետաքրքրվել են հայկական արտադրության կարճամետրաժ ֆիլմերով:

Բուենոս Այրեսի կինոփառատոնում էլ եկող տարի՝ 2010 թվականին ցուցադրվելու են Հարություն Խաչատրյանի 3 ֆիլմերը: Նույն ռեժիսորի 7 ֆիլմերի՝ «Սահման», «Կոնդ», «Պոետի վերադարձը», «Վավերագրողը», «Վերջին կայարանը», «Վերադարձ ավետյաց երկիր», «Սպիտակ քաղաքը», հետահայաց ցուցադրությունն է կազմակերպվելու հունիսի 19-ին Մոսկվայում կայանալիք կինոփառատոնում: Նույն փառատոնի «Հեռանկար» մրցույթում ներկայացվելու է ռեժիսոր Հովհաննես Գալստյանի «Խճճված զուգահեռներ» գեղարվեստական ֆիլմը, որը ռեժիսորի դեբյուտն է լիամետրաժ կինոյում:

Կաննում հայկական պատվիրակությունը հանդիպել ու բանակցել է Ֆրանսիայի ամենահայտնի կինոդիստրիբյուտոր Ալան Թերզյանի հետ, վերջինիս հետաքրքրությունը նույնպես, ըստ Գեւորգ Գեւորգյանի, բացատրվում է հայ լինելով:

Այնուամենայնիվ հայ կինեմատոգրաֆիստների ստեղծագործական հնարավորություններն էլ ուշադրության արժանացել են ու բերել տարբեր երկրների կինոստուդիաների հետ համատեղ աշխատանքի հնարավորության հեռանկարներ: Խոսելով այս մասին, Գեւորգ Գեւորգյանն ընդգծեց, որ հաջողելու դեպքում աշխատանքի 20 տոկոսը կիրականացվի Հայաստանում կամ հայ մասնագետների կողմից, ինչը կգնահատվի կինոարտադրությունում ընդունված միջազգային չափանիշների հոնորարներով:


ՖՈՏՈԼՈՒՐ

Կաննում հայկական պատվիրակությունը նաեւ կարողացել է զարմանք հարուցել արտադրանքի եւ դրան հատկացված ֆինանսական միջոցների համամասնությամբ:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Հուլիսի 12-ից ծիրանի բույրը կրկին կտարածվի Երեւանում

«Հայը չի կարող աշխարհին նույն կերպ նայել, ինչպես ֆրանսիացին, գերմանացին, լեհը: Տածողությունն է տարբեր, սակայն աշխարհում այլ վայրեր չկան, որտեղ հայազգի ռեժիսորները անկախ փաստից, թե ո՛ր երկրում են ստեղծագործում, կարողանան հանդիպել, ծանոթանալ միմյանց աշխատանքներին, հետագա ստեղծագործական նախագծեր մշակեն: Այս հինգ տարվա ընթացքում «Ոսկե ծիրան» կինոփառատոնի շրջանակներում տեղի ունեցած ծանոթությունները շատ մեծ նշանակություն ունեն», նկատում է «Ոսկե ծիրան» կինոփառատոնի ֆիլմերի ղեկավար **Միքայել Ստամբուլցյանը**՝ կարեւորելով Հայկական համայնապատկեր ծրագրի դերը, որտեղ ներկայացված են ոչ միայն Հայաստանում ստեղծագործող ռեժիսորների, այլեւ սփյուռքահայ արվեստագետների (Ֆրանսիա, Իրան, Գերմանիա, Ռուսաստան) ֆիլմերը:

Վեցերորդ տարին անընդմեջ անցկացվող կինոփառատոնը այս տարի կինոսերների ու քննադատների դատին կհանձնի 110 ֆիլմ ավելի քան 40 երկրից: Ստամբուլցյանը խոստովանում է, որ ընտրությունը դաժան է եղել, ստացել են 430 հայտ 65 երկրից, ընտրել են լավագույն աշխատանքները: Կինոփառատոնը կանցկացվի երեք մրցութային ծրագրով՝ Միջազգային խաղարկային, վավերագրական ֆիլմերի եւ հայկական համայնապատկեր: Կինոփառատոնը կմեկնարկի հուլիսի 12-ին:

Արդեն ավանդական է դարձել «Ոսկե ծիրան» կինոփառատոնի մեկնարկը սկսել ֆիլմով, որը առնչություն ունի Հայաստանի եւ հայ մշակույթի հետ: Այս տարի էլ բացառություն չի լինի. փառատոնը կբացվի Լոռեն Տյուելի «Առաջին շրջան» ֆիլմով, որի պրոդյուսերն է ֆրանսահայ անվանի կինոգործիչ Ալան Թերզյանը: Վերջինս Կաննի փառատոնի ղեկավարներից է, «Սեզար» ակադեմիայի եւ «Ալտեր ֆիլմս» պրոդյուսերական ընկերության նախագահը: Ֆիլմում հանցագործի դերը կատարում է հայտնի դերասան Ժան Ռենոն, որը սակայն անձնական խնդիրների պատճառով Հայաստան չի այցելի:

Կինոփառատոնի հատուկ իրադարձություններից է Սերգեյ Փարաջանովի ծննդյան 85 եւ «Նռան գույնը» ֆիլմի 40 ամյակի առթիվ կայանալիք ֆիլմի հայկական տարբերակի ցուցադրությունը: «Հայկական կինոյի պատմության մեջ արժանի տեղ գտած լավագույն ստեղծագործություններից է: Այս կերպ յուրատեսակ հարգանքի տուրք կմատուցենք մեծ ռեժիսորին ու նրա ստեղծագործությանը: Ցուցադրությանը կմասնակցի «Նռան գույնը» ֆիլմի ողջ ստեղծագործական կազմը», նկատեց **Սուսաննա Հարությունյանը**:



ՖՈՏՈԼՈՒՐ

Հարուստ ու բովանդակալից է նաեւ հետահայաց ցուցադրությունների շարքը: Հայ հանդիսատեսը կտեսնի արդի ժամանակաշրջանի երեք մեծանուն ռեժիսորների՝ Յեժի Սկոլիմովսկի (Լեհաստան, Կոհեյ Օգուրինի (Ճապոնիա) եւ Ռոբ Նիլսոնի (ԱՄՆ) ստեղծագործությունները: Ֆիլմերի ցուցադրությանը կմասնակցեն նաեւ հեղինակները:

Հետահայաց ցուցադրությունը կնշանավորվի նաեւ հայկական լավագույն ֆիլմերի ներկայացմամբ: Հարգանքի տուրք կմատուցվի ռեժիսոր Բագրատ Հովհաննիսյանին. կցուցադրվեն Բագրատյանի ամենահայտնի ստեղծագործությունները՝ «Աշնան արեւ», «Տերն ու ծառան» ֆիլմերը, որոնք հայկական կինեմատոգրաֆի զարդերն են: Կնշվի նաեւ Արման Մանարյանի ծննդյան 80-ամյա հոբելյանը:

«Հարուստ է Երեւանյան պրեմիերաների ծրագիրը: Կցուցադրվեն հանրահայտ ռուս ռեժիսոր Սերգեյ Սոլովյովի «Աննա Կարենինա» եւ «Ասսա 2» ֆիլմերը: Փառատոնի հատուկ հյուրերից է նաեւ նշյալ ֆիլմերի դերասանուհի Տատյանա Դրուբիչը: Հայ հանդիսատեսը կտեսնի Ֆրենսիս Ֆորդ Կոպոլայի «Տետրո» ֆիլմը, որի համաշխարհային պրեմիերան կայացել է Կաննի փառատոնում: Կլինեն արդեն սիրելի դարձած «Արաբական գիշերներ» եւ «Մեկ օր Եվրոպայում» խորագրով ծրագրերը», ասաց Հարությունյանը:

«Սակայն այսքանով կինոփառատոնի անակնկալները չեն ավարտվում: «Վարպետներ» ծրագիրը ներառում է երեք մեծանուն ռեժիսորների՝ Լուիս Բյունուելիին, Միքելանջելո Անտոնիոնիին եւ Տոնինո Գուերային նվիրված ֆիլմերը: Իսկ «Արտադրված է Հայաստանում» տեղեկատվական ծրագիրը կներառի վերջին տարիներին Հայաստանի ազգային կինոկենտրոնի եւ վավերագրական ֆիլմերի «Հայք» ստուդիայի նկարահանած ֆիլմերը», ասաց Միքայել Ստամբուլցյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՃԱՆԱՉՈՒՄ

# «Հոգու պատուհաններ»՝ ամերիկահայ տաղանդավոր ֆոտոլրագրուհու նոր գիրքը

**Ամերիկահայ ֆոտոլրագրողուհի Ալեքսանդրա Ավագյանի անունը եթե շատ ծանոթ չէ Հայաստանում, այնուամենայնիվ նրանք, ովքեր National Geographic (Նեշընլ Ջեոգրաֆիկ) ամսագրի եւ աշխարհում վայելած նրա բարձր հեղինակության մասին լսել են, պիտի անպայման հիշեն 2004 թվի համարներից մեկում նրա պատրաստած 22 էջանոց ռեպորտաժը՝ «Հայաստանի վերածնունդը» վերնագրով, որն իր ժամանակին մեծ աղմուկ բարձրացրեց եւ ջերմությամբ ընդունեցին հայերը:**

**Ավագյանը 1995 թվից է աշխատակցում այդ բովանդակալից ամսագրում: Միեւնույն ժամանակ նա Նյու Յորքի «Contact Press Images» լրատվական գործակալության ավագ անդամներից է, եւ վերջին 25 տարիների ընթացքում լինելով աշխարհի ամենատարբեր եւ ամենաթեժ կետերում, «որսացել» է պատմության կարեւորագույն պահերը, որոնց թվում կարելի է հիշատակել Բեռլինյան պատի քանդումը, պաղեստինցիների «Ինթիֆադան» (ապստամբությունը), «Հզբոլլահի» գաղտնարանները, քաղաքացիական պատերազմն ու սովը Սոմալիում եւ Սուդանում, ինչպես նաեւ 1988-ի երկրաշարժը Սպիտակում եւ Լենինականում: Ի դեպ, այդ վերջինի ժամանակ նա Եգիպտոսում է եղել իր ընտանիքի հետ եւ լսելով երկրաշարժի մասին, անմիջապես ուղեւորվել Հայաստան ֆոտոլրագրուհու իր պարտականությունը կատարելու:**

**«Չափազանց դժվար էր Հայաստանի հետ իմ առաջին շփումը իրականացնել նման մեծ չափսի աղետի պայմաններում», հիշում է Ալեքսանդրան, ով դրանից հետո մի քանի անգամ դարձյալ այցելելով Հայաստան, 2004-ին ի վիճակի էր եղել պատրաստել իր՝ այս անգամ վերածնված երկիրը ներկայացնող ռեպորտաժը:**

**Ալեքսանդրա Ավագյանը ծնվել է Նյու Յորքում, սակայն ներկայումս ապրում է Վաշինգտոնում: Մեծացել է կինոյի եւ թատրոնի աշխարհում: Մայրը՝ Դորոթի Տրիստանը, գրող եւ դերասանուհի է եղել: Հայրը, Արա Ավագյանը՝ խմբագիր, ռեժիսոր եւ մոնտաժող, նա է ամեն ինչ սովորեցրել իր դստերը, որն արդեն 9 տարեկանում սկսել է «Լայֆ» հանդեսից նկարներ կտրատել եւ ծանոթանալ դրանց պատմությանը: Պրոֆեսիոնալ լուսանկարչությամբ զբաղվել է 1984-ից սկսած: Նրա ֆոտոռեպորտաժները տպագրվել են այլոց շարքում նաեւ հեղինակավոր «Թայմ» եւ «Նյու Յորք թայմս» հանդեսներում:**

**1990-92 թվերին ապրել է Մոսկվայում «Թայմ» հանդեսի համար նյութեր պատրաստելու Խորհրդային Միության փլուզման մասին: 1993-96 թվերին բնակվել է Գազայում: Դրանցից առաջ լուսաբանել է 1986-ին՝ ապստամբությունը Հաիթիում, 1987-1995՝ պաղեստինյան «Ինթիֆադան», Չեխոսլովակիայում «թավշյա» հեղափոխությունը: Ամենադժվարը, նրա խոսքերով, եղել է «Հզբոլլահի» խորշերը թափանցելը ութ շաբաթների ընթացքում: Նրան օգնել են իր հաստատակամությունը, անկեղծությունը եւ իրազեկվածությունը:**



**«Ինձ համար հետաքրքրական է խոչընդոտներ հաղթահարելը, կամուրջներ եւ սահմաններ անցնելը: Ուզում եմ իմանալ, թե այն մյուս կողմում ի՞նչ է կատարվում: Իմանալով նրանց պատմությունը կամ տեսակետը, մեծանում է երկխոսության հնարավորությունը, որը բանալին է խաղաղության եւ փոխըմբռնման: Հատկապես 9/11-ից հետո, երբ առավել բարդացան արեւելք-արեւմուտք հարաբերությունները, ես կարեւոր համարեցի մահմեդական աշխարհում ունեցած իմ փորձառությունը մի գրքով ներկայացնել աշխարհին», ասում է Ալեքսանդրան՝ խոսելով իր վերջերս հրատարակած «Հոգու պատուհաններ: Իմ ուղեւորությունները մահմեդական աշխարհում» գրքի մասին:**

**Գիրքը, որն արդեն դրական գրախոսականների է արժանացել, բաժանված է 6 մասերի՝ 1) Պաղեստինցիները, 2) Իրանը, 3) Կենտրոնական Ասիան եւ Կովկասը, 4) Սոմալին, 5) Սուդանը եւ 6) Հզբոլլահը, եւ «Ամերիկյան ֆոտոյի» կողմից արդեն իսկ արժանացել է «տարվա լավագույն լուսանկարչային գրքերից մեկը» տիտղոսին:**

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Գերմանական շաբաթները շարունակվում են

«Գերմանիայի շաբաթների 2009» ծրագրի շրջանակում հունիսի 10-ին եւ 11-ին Վայոց Ձորի մարզում համերգներով հանդես կգան տենոր Քրիստոֆ Շեբենը եւ դաշնակահար Ստյուարտ Էմերսոնը: Միջազգային ասպարեզում հաջողություն վայելող եւ նորարարությամբ աչքի ընկնող երաժիշտները կկատարեն Ֆելիքս Մենդելսոն Բարթոլդիի, Յոհաննես Բրամսի, Ֆրանց Շուբերտի եւ Ռիխարդ Շտրաուսի ստեղծագործությունները:

Դեսպանությունը կարեւոր է համարում Գերմանիայի շաբաթների շրջանակում տեղի ունեցող մշակութային միջոցառումների կազմակերպումը ոչ միայն Երեւանում, այլեւ Հայաստանի մարզերում:

Ջերմուկում համերգը կկայանա հունիսի 10-ին, ժամը 17:00-ին Արվեստի կրթօջախում, իսկ Եղեգնաձորում համերգը տեղի կունենա հունիսի 11-ին, ժամը 18:00-ին մշակույթի կենտրոնում:

Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

---

Ի լրումն «ԱԶԳ» 10.06.2009թ. օրաթերթում տպագրված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության մասով թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարության.

**Կենտրոնական ապարատ կրտսեր պաշտոններ / բաց մրցույթ/ բաժնում ավելացնել.**

7.Մաքսային հսկողության վարչության կազմակերպական վերահսկողական բաժնի մաքսային տեսուչ.

Մասնակցություն մաքսային գործի կազմակերպմանը, այդ աշխատանքների նկատմամբ իրականացվող հսկողությանը, համապատասխան փաստաթղթերի ներկայացում բաժնի պետին

*ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ*

AZG NEW 7.QXD 6/10/2009 10:06 PM Page 1





# Ֆլեմինգ Սերիցլեւ. «Այս պարտությունը փոքր աղետ էր մեզ համար»

***Թուրքերից Հայաստանի երիտասարդական հավաքականի կրած խոշոր հաշվով պարտությունը մեծ ցավ պատճառեց հայ ֆուտբոլասերներին: Եվ դա հասկանալի է: Բայց պետք է խոստովանենք, որ մրցակիցն իրոք մի գլխով բարձր էր մեր ֆուտբոլիստներից ու վարպետության դաս տվեց նրանց: Այդ հանդիպումը մեկ անգամ եւս բացահայտեց հայկական ֆուտբոլի ներկայիս տխուր իրավիճակը: Չանդրադառնալով խաղի մանրամասներին ու պարտության պատճառներին, այսօր ընթերցողներին ենք ներկայացնում հանդիպումից հետո կայացած մամուլի ասուլիսում հավաքականների գլխավոր մարզիչների հայտնած տեսակետները:***

-Կարծում եմ բոլորդ էլ հասկանում եք, որ սա փոքր աղետ էր մեզ համար: Արդյունքից շատ եմ հիասթափված: Կասկած չկա, որ թուրքերն արժանի էին հաղթանակի: Բոլորդ էլ տեսաք, որ մեր պաշտպանությունը շատ թույլ


ՖՈՏՈԼՈՒՐ

խաղաց, իսկ ահա առջեւի գծի ֆուտբոլիստների խաղն այսպիսի ուժեղ հավաքականի դեմ վատ տպավորություն չթողեց եւ պետք է բավարարված լինենք: Մարզչական կազմն ու ֆուտբոլիստները շատ ենք ցավում, որ այսպես ստացվեց: Իհարկե, կարելի է նաեւ ֆուտբոլիստներին գովել, որ նույնիսկ անհուսալի թվացող իրավիճակում մինչեւ վերջ պայքարեցին ու կարողացան 2 գոլ խփել:

**- Չե՞ք կարծում, որ մեր տղաների փոխանցումների կուլտուրան թուրքերի համեմատ շատ ցածր էր:**

- Համամիտ եմ: Մանավանդ առաջին խաղակեսում եղավ մի հատված, երբ մերոնք անընդհատ կորցնում էին գնդակը պարզ իրադրություններում կամ էլ բարձրից երկար փոխանցումներ էին կատարում, որոնց սովորաբար տիրում էին բարձրահասակ հյուրերը: Իսկ արդեն 2-րդ խաղակեսի վերջնամասում մեր ֆուտբոլիստները ցույց տվեցին, որ ընդունակ են նաեւ մեկ հպումով փոխանցումներով արագ գրոհներ կազմակերպել: Մենք նույնիսկ առաջին խաղակեսում գոլ խփելու լավ հնարավորություն ունեինք: Ֆուտբոլիստներին խորհուրդ էի տվել հեռահար հարվածներ շատ կատարել դարպասին: Սակայն, ցավոք, հարվածներ քիչ կատարվեցին:

**- Ինչո՞վ էր պայմանավորված դարպասի պաշտպանությունը Էդուարդ Հովհաննիսյանին վստահելը: Չէ՞ որ ի տարբերություն Գեւորգ Պրազյանի, նա ընթացիկ մրցաշրջանում խաղային փորձ գործնականում չուներ:**

- Եվ ես, եւ Էդուարդը գտնում էինք, որ նա պատրաստ է խաղին: Բաց թողած գոլերում դժվար է նրան մեղադրել, ավելի շատ մեղավոր էին պաշտպանները, որոնք հստակ չգործեցին:

**- Այսօրվա խաղում հատկապես «կաղում» էր մեր պաշտպանության աջ թեւը, որտեղ իր համար անսովոր դիրքում խաղում էր կիսապաշտպան Կառլեն Մկրտչյանը: Այդ դիրքի համար դուք այլ տարբերակ չունեի՞ք:**

- Կառլեն Մկրտչյանը «Փյունիկում» մի քանի խաղ անցկացրել է աջ պաշտպանի դիրքում, նախկինում ազգային հավաքականում էլ նման պարտականություն է կատարել: Մենք այլ տարբերակ չունեինք: Իհարկե, կարող էինք մեկնարկային կազմում ընդգրկել «Փյունիկի» երիտասարդ պաշտպան Կամո Հովհաննիսյանին: Սակայն նման պատասխանատու խաղում նրան խաղացնելը որոշակի ռիսկի հետ էր կապված:

**- Ի՞նչ կասեք Հրաչ Յագանի խաղի մասին:**

- Նա առաջին խաղն էր անցկացնում հավաքականի կազմում, թեեւ մասնակցել էր նաեւ մեր նախորդ հավաքին: Նա այն ֆուտբոլիստներից մեկն էր, ով չէր մասնակցել շվեյցարացիների հետ հանդիպմանը, ուստի ուժերը վերականգնելու խնդիր չուներ: Այս խաղում նա իր դիրքում չխաղաց, այլ կատարեց եզրային կիսապաշտպանի պարտականություն, որի պատճառով էլ չկարողացավ իրեն լավ դրսեւորել: Շվեյցարացիների հետ խաղում Արտակ Դաշյանն ու Արթուր Յուզբաշյանն իրենց լավ էին դրսեւորել դաշտի կենտրոնական մասում, ուստի չցանկացա փոփոխել նրանց դիրքերը:

**- Չե՞ք կարծում, որ Դավիթ Մանոյանին ուշացումով ասպարեզ դուրս բերեցիք: Նա զգալիորեն ակտիվացրեց հավաքականի հարձակողական գործողությունները:**

- Իհարկե, խաղից հետո հեշտ է նման եզրակացությունների հանգելը: Բայց իրոք Մանոյանի մուտքը խաղադաշտ շատ հաջող էր:

**- Այսօր կարծես կրկնվեց Շվեյցարիայի հավաքականի հետ առաջին խաղակեսի սցենարը:**

- Շվեյցարիայում մեր դարպասը խփած առաջին գոլը մրցավարի նվերն էր դաշտի տերերին, քանի որ գնդակը չէր հատել դարպասային գիծը: Իսկ դուք գիտեք, թե բաց թողած գոլն ինչպես է ազդում ֆուտբոլիստների վրա: Երկու խաղերում էլ առաջին խաղակեսերում մեր գործողություններում թերություններ կային:

**- Ի՞նչ եք կարծում, այս թիմով հնարավո՞ր է հաջողության հասնել եւ ի՞նչ դիրքերում պետք է ուժեղացվի կազմը:**

- Կարծում եմ, որ պաշտպանությունն ուժեղացնելու դեպքում կարող ենք հաջող խաղալ: Այս գծում հիմնախնդիրներ ունենք, քանի որ բացի Կարեն Խաչատրյանից, մեր մյուս պաշտպաններն իրենց թիմերի հիմնական կազմում հազվադեպ են խաղում: Նույնը վերաբերում է դարպասապահին: Հույս ունեմ, որ հաջորդ խաղին հնարավորություն կունենանք թիմում ընդգրկել «Մարսելի» 2-րդ կազմի կենտրոնական պաշտպան Վարանդ Պզտիկյանին: Ունենք լավ կիսապաշտպաններ ու հարձակվողներ: Ես լավատես եմ ու հուսով եմ, որ ուժեղ հավաքական կունենանք:

# Համի Մանդիրալի. «Տեխնիկական խոտանը թույլ չտվեց ձեզ լավ արդյունքի հասնել»

**Նախ կցանկանայի շնորհակալություն հայտնել Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությանը մեր հանդեպ ցուցաբերած լավ վերաբերմունքի համար: Այսօր շատ լավ խաղ ընթացավ գեղեցիկ մարզադաշտում: Երկու իրար արժանի մրցակիցների մրցավեճ էր, որում կարողացանք հաղթել: Շատ գոհ եւ երջանիկ եմ: Մեր լրագրողներն ու երկրպագուները ձեռքից բաց թողեցին հոյակապ հանդիպումը դիտելու հնարավորությունը: Սակայն քանի որ խաղը կայանում էր Երեւանում, նրանք հնարավորություն չեն ունեցել ներկա գտնվելու հանդիպմանը:**

**Մեր հավաքականի 2-րդ մարզիչը դիտել էր Շվեյցարիա-Հայաստան հանդիպումը: Կարող եմ ասել, որ առաջին խաղակեսում շվեյցարացիները լավ խաղացին, երկրորդում՝ հայերը: Այսօր էլ խաղը գրեթե նույն սցենարով ընթացավ: 2-րդ խաղակեսում Հայաստանի հավաքականը տիրեց նախաձեռնությանը, ֆիզիկապես կարողացավ մեզ ճնշել, սակայն տեխնիկական խոտանը թույլ չտվեց լավ արդյունքի հասնել: Սովորաբար մրցավարության մասին չեմ խոսում: Կարող եմ միայն ասել, ոչ մրցավարը մեկական կարմիր քարտ ցույց տվեց ու այսպիսով հավասարեցրեց թիմերի հնարավորությունները: Կարծում եմ, որ մրցավարությունը չազդեց հանդիպման ելքի վրա:**

**Ինչ վերաբերում է հայ երկրպագուներին, ապա նորմալ էր, սակայն կցանկանայի, որ նրանք ավելի շատ երկրպագեն իրենց թիմին, այլ ոչ թե հակառակորդի դեմ: Նաեւ լավ կլիներ, որ Թուրքիայի օրհներգի ժամանակ ձեր երկրպագուների որոշ մասը նստած չլինեին եւ սուլոցներով չուղեկցեին:**

## Ջախջախում Բաքվում

**Ֆուտբոլի Իսպանիայի ազգային հավաքականը Բաքվում ընկերական խաղում 6-0 հաշվով ջախջախելով ադրբեջանցիներին, համաշխարհային նոր ռեկորդ սահմանեց: Իսպանացիներն արդեն 32 խաղ շարունակ պարտություն չեն կրել: Ի դեպ, Եվրոպայի չեմպիոններին հրավիրելու համար Ադրբեջանի ֆուտբոլի ֆեդերացիան իսպանացիներին 1 մլն եվրո էր վճարել: Իսպանացիները դաշտի տերերին վարպետության իսկական դաս տվեցին, իսկ տրիբունայում հավաքված ֆուտբոլասերները հերթական անգամ պահանջում էին Ադրբեջանի հավաքականի գլխավոր մարզիչ Բերտի Ֆոգտսի հրաժարականը:**

## «Ռեալը» հետաքրքրվում է Խաբի Ալոնսոյով

Մադրիդի «Ռեալի» նոր ղեկավարությունը շարունակում է թիմի կազմն ուժեղացնելու աշխատանքները: «Ռեալը» 23 մլն եվրո է առաջարկել «Լիվերպուլի» իսպանացի ֆուտբոլիստ Խաբի Ալոնսոյի համար: Սակայն Անգլիայում ֆուտբոլիստին ավելի թանկ են գնահատում՝ պահանջելով 40 մլն եվրո:

ԸՆՏՐԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ

# Անակնկալ արդյունք

**Ֆուտբոլի աշխարհի առաջնության Հարավային Ամերիկայի ընտրական մրցաշարի հերթական տուրում անակնկալ արդյունք գրանցվեց: Աշխարհի հնգակի չեմպիոն Բրազիլիայի հավաքականը հյուրընկալվելիս 4-0 հաշվով ջախջախեց ուրուգվայցիներին: Ոչ ոք նման արդյունք չէր ակնկալում, քանի որ ուրուգվայցիների կազմում էր հավաքականի ավագ, «Ոսկե խաղակոշիկի» դափնեկիր Դիեգո Ֆոռլանը: Սակայն արդեն 2-րդ խաղակեսի սկզբում հանդիպման ելքը վճռված էր: 12-րդ րոպեին հաշիվը բացել էր Դանիել Ալվեսը, իսկ մինչեւ ընդմիջում Ժուանը երկրորդ գոլն էր խփել: 52-րդ րոպեին Լուիս Ֆաբիանոն 3-րդ անգամ գրավեց Սեբաստիան Վիեռայի պաշտպանած դարպասը: Դաշտի տերերի ջախջախումն ավարտեց Կական՝ իրացնելով 11 մ հարվածը: Բրազիլացիները գլխավորեցին մրցաշարային աղյուսակը: Իսկ ահա ուրուգվայցիներն ընթանում են 5-րդ տեղում՝ 5 միավորով հետ մնալով 4-րդ հորիզոնականում գտնվող արգենտինացիներից:**



**Կարեւոր հաղթանակ տոնեց Արգենտինայի հավաքականը՝ սեփական հարկի տակ 1-0 հաշվով պարտության մատնելով Կոլումբիայի ընտրանուն: Դիեգո Մարադոնայի սաներին հաղթանակ պարգեւեց Դանիել Դիասի խփած միակ գոլը: Կոլումբիացիները վերջին 8 հանդիպումներից 7-ում չեն կարողացել գրավել մրցակիցների դարպասները:**

**Պարագվայի հավաքականը, որ 2007-ի նոյեմբերին Սանտյագոյում 3-0 հաշվով ջախջախել էր Չիլիի ֆուտբոլիստներին, սեփական հարկի տակ զիջեց մրցակցին (0-2): Վենեսուելայի հավաքականը ցույց տվեց, թե ինչպես պետք է հաղթել բոլիվիացիներին նրանց դաշտում: Ճիշտ է, միակ գոլը սեփական դարպասը խփեց բոլիվիացի Ռոնալդ Ռիվերոն: Այս հաղթանակից հետո Վենեսուելայի հավաքականը լավ հնարավորություն ստացավ առաջին անգամ հավակնելու եզրափակիչի ուղեգրին: Էկվադորի հավաքականն էլ հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթելով Պերուի ընտրանուն, եւս ուղեգրի համար պայքարելու հնարավորություն ստացավ:**

# Հունաստանում օլիմպիական կրակի փոխանցումավազքը կպահպանվի

**Հունաստանը մտադիր չէ իր տարածքում վերացնել օլիմպիական կրակի փոխանցումավազքի անցկացումը, չնայած ՄՕԿ-ի որոշմամբ այն թույլատրվելու է միայն օլիմպիական խաղերի կազմակերպիչ երկրի ներսում: Մարտին ՄՕԿ-ի ընդունած որոշումը թեեւ պաշտոնապես ուժի մեջ է մտնելու միայն 2016-ից, սակայն 2010-ին Վանկուվերում կայանալիք ձմեռային օլիմպիադայի եւ 2012-ի Լոնդոնի օլիմպիական խաղերի կազմկոմիտեներն արդեն հրաժարվել են իրենց տարածքներից դուրս կրակի փոխանցումավազքից: 2014-ի Սոչիի ձմեռային օլիմպիադայի կազմկոմիտեն էլ նույն կերպ է վարվել:**

**Հիշեցնենք, որ ՄՕԿ-ի նման որոշման պատճառ էին Պեկինի օլիմպիադայի ջահի փոխանցումավազքի ընթացքում տեղի ունեցած միջադեպերը, երբ հարձակվել էին ջահակիրների վրա եւ փորձել հանգցնել կրակը:**

**Հունաստանի օլիմպիական կոմիտեի նախագահ Սպիրոս Կապրալոսը նշել է, որ այսուհետեւ եւս օլիմպիական կրակի փոխանցումավազքը երկրի քաղաքներով կանցկացվի ամբողջ ծավալով: Օլիմպիական կրակի վառման հանդիսավոր արարողությունը տեղի է ունենում Հին Օլիմպիայում, իսկ կազմակերպիչ երկրի ներկայացուցիչներին ջահը փոխանցվում է Աթենքի օլիմպիական մարզադաշտում:**

# Բատոնը խախտեց ավանդույթը



**«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության առաջատար Ջենսոն Բատոնը հաղթող ճանաչվեց Թուրքիայի Գրան պրիի խաղարկությունում: Դա Բատոնի 6-րդ հաղթանակն էր ընթացիկ առաջնության 7 փուլերում:**

**Թուրքիայում նախորդ չորս տարիներին անցկացված մրցումներում մշտապես հաղթել էին այն մարզիկները, որոնք որակավորման մրցումներում լավագույն արդյունքի էին հասել: Երեք անգամ հաջողությունն ուղեկցել էր Մասային, մեկ անգամ՝ Կիմի Ռայկոնենին: Թուրքիայում որակավորման փուլում բոլորից հաջող ելույթ ունեցավ գերմանացի Սեբաստիան Ֆետելը: Ուստի հաշվի առնելով արդեն ձեւավորված ավանդույթը, շատերը հենց նրան էին համարում Գրան պրիի հաղթողի գլխավոր հավակնորդ: Վերջինս մեկնարկից առաջ խոստացել էր, որ ամեն ինչ կանի առաջատարներից միավորների տարբերությունը կրճատելու համար:**

**Սակայն Բատոնը Թուրքիայում էլ անպարտելի էր: Նա կրկին լավագույն արդյունքը ցույց տվեց եւ ավելի ամրապնդեց առաջատարի դիրքերը: Ընդհանուր հաշվարկով Բատոնը 61 միավոր է վաստակել եւ 26-ով առաջ անցել «Բրաունի» իր թիմակից Ռուբենս Բարիկելոյից: Վերջինիս 6 միավոր է զիջում «Ռեդ Բուլի» ավտոմրցարշավորդ Սեբաստիան Ֆետելը: «Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում առջեւից է ընթանում «Բրաունը», որը վաստակել է 96 միավոր: 56,5 միավորով 2-րդ տեղում «Ռեդ Բուլն» է: Լավագույն եռյակը եզրափակում է «Տոյոտան»՝ 32,5:**

*էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW 8.QXD 6/10/2009 10:05 PM Page 1



# Ծանուցում




## Մրցույթի հրավեր 072/09/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակն **«Աղետներին պատրաստվածության եւ ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում»** ծրագրի շրջանակներում հայտարարում է մրցույթ` ՀՀ Արարատ մարզի Ռանչպար եւ Արեւաբույր համայնքների դրենաժային համակարգերի մաքրման, Այգեպատ համայնքի սելավատարի մաքրման եւ Սիփանիկ համայնքի ափապաշտպան հողապատնեշի կառուցման աշխատանքների իրականացման համար:

Հարցերի համար դիմել ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի գնումների բաժին` Գագիկ Շահինյանին, հեռ. 56 60 73+119 (ներքին), տեխնիկական հարցերով` ծրագրի ղեկավար Արմեն Չիլինգարյանին, հեռ. 61 42 76:

Աշխատանքների իրականացման նախագիծը կարելի է ձեռք բերել ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի գնումների բաժնից ամեն օր, ժամը 16:00-16:30:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը` հունիսի 19, ժամը 17:00:

## Letter of Invitation 072/09/PRO

UNDP Armenia under the Project 00058164 Strengthening National Capacities for Disaster Preparedness and Risk Reduction is announcing a tender for cleaning drainage systems in Ranchpar and Arevabuyr communities, cleaning the mudflow channels in Aygepat community and construction of a dam in Sipanik community, Ararat Marz.

For any inquiries relating to the tender, please contact Gagik Shahinyan at 56 60 73+119 (ext.), Procurement Unit of the UNDP Armenia, for technical issues Armen Chilingaryan, the Project Coordinator, at 61 42 76.

The design for the implementation of the above mentioned works can be obtained from the Procurement Unit of the UNDP Armenia every day from 16:00 16:30

Application deadline: 19 June 2009, 17:00

## Մրցույթի հրավեր 073/09/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ` «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ֆինանսական վարչարարության համակարգի հզորացմանն ուղղված» ծառայությունների մատուցման համար:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից` Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին` հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը` հունիսի 25, ժամը 17:00:

## Letter of Invitation 073/09/PRO

United Nations Development Programme (UNDP) Armenia announces a competition for procurement of Strengthening the Financial Administration System of the Human Rights Defenders Office in Armenia services. Detailed Request for Quotation can be obtained from UNDP Armenia website at **http://www.undp.am/?page=TendersAnnouncements** or from UNDP Armenia Procurement Unit, 14 Petros Adamyan St., Yerevan, from 14:00-16:00. Tel: 56 60 73 +126 (Grigor Akhnoyan).

Offers must be submitted to the UN security guards office at 14 Petros Adamyan St., Yerevan.

Deadline: 25 June 2009, 17:00 local time.

## Մրցույթի հրավեր 075/09/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ` Մասնագիտական կրթության եւ ուսուցման զարգացման ազգային կենտրոնի աշխատակազմի վերապատրաստման դասընթացների կազմակերպման եւ իրականացման նպատակով: Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից` Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին` հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը` հունիսի 26, ժամը 17:00:

## Letter of Invitation 075/09/PRO

United Nations Development Programme (UNDP) Armenia announces a competition for procurement of Training Provider for Capacity Building of National Center for Vocational Education and Training System Development services. Detailed Request for Quotation can be obtained from UNDP Armenia website at **http://www.undp.am/?page=TendersAnnouncements** or from UNDP Armenia Procurement Unit, 14 Petros Adamyan St., Yerevan, from 14:00-16:00. Tel: 56 60 73 +126 (Grigor Akhnoyan).

Offers must be submitted to the UN security guards office at 14 Petros Adamyan St., Yerevan.

Deadline: 26 June 2009, 17:00 local time.

## ՍՏԱՑԻ՛Ր ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ` ՉԼՔԵՌԱՆԱԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՎ ...

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION UNIVERSITÉ FRANÇAISE EN ARMÉNIE

Հայաստանում ֆրանսիական համալսարանը հայտարարում է ընդունելություն բակալավրիատի կրթական ծրագրով 2009-2010 ուսարվա համար հետեւյալ ֆակուլտետներում`

- **Առեւտուր եւ մարքեթինգ**
- **Կառավարում**
- **Իրավունք**




Ուսումառության ավարտին ուսանողները ստանում են ֆրանսիական եւ հայկական պետական նմուշի դիպլոմներ եւ կարող են ուսումը շարունակել բուհի մագիստրատուրայում:

**Հայտերն ընդունվում են 2009 թ. հունիսի 11-ից հուլիսի 11-ը ժամը 10.00-ից մինչեւ 17.00:**

*Ներկայացվող փաստաթղթեր.*

- Միջնակարգ կրթության վկայական (բնօրինակը կամ պատճենը),
- 3x4 չափի մեկ լուսանկար,
- Անձնագրի կամ ծննդյան վկայականի բնօրինակը եւ պատճենը (ծննդյան վկայականի դեպքում` նաեւ տեղեկանք բնակության վայրից եւ անձը հաստատող փաստաթուղթ լուսանկարով),
- Զինվորական հաշվառման վկայականը,
- Գործերի ընդունման համար վճարի անդորրագիրը (մեկ ֆակուլտետ դիմելու դեպքում գործերի ընդունման վճարը կազմում է 7200 դրամ, միաժամանակ երկու ֆակուլտետ դիմելու դեպքում` 9600 դրամ):



Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել`

*Հայաստանում ֆրանսիական համալսարան*
*0037 ք. Երեւան, Դավիթ Անհաղթի 10:*
*Հեռ.` 24 96 45, 24 96 55*
*Էլ. փոստ` communication@ufar.am*

## ... ԴԱՐՁԻ՛Ր ՎԱՂՎԱ ՂԵԿԱՎԱՐԸ

## Դասախոսական կազմի ընդունելություն Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամում (ՀՖՀՀ)

Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամը միջպետական բուհ է, որը շնորհում է Ֆրանսիայի եւ Հայաստանի պետական նմուշի դիպլոմներ (Licence/Բակալավրիատ, Master/Մագիստրատուրա), որոնք հաստատված են Բոլոնիայի համաձայնագրով:

2009-2010 ուսարվա ընդունելության համար Հայաստանում ֆրանսիական համալսարանն աշխատանքի է հրավիրում դասախոսների հետեւյալ առարկաների գծով.

Իրավաբանություն

Ֆինանսներ, հաշվապահություն, աուդիտ

Մարքեթինգ

Տնտեսագիտություն

Ընդհանուր եւ մասնագիտական (Իրավաբանություն, Մարքեթինգ, Կառավարում) ֆրանսերեն եւ ուսանողների ղեկավարման համար պատասխանատու փորձառու դասախոս (նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների օգտագործում)

Ընդհանուր եւ մասնագիտական (Իրավաբանություն, Մարքեթինգ, Կառավարում) անգլերեն

Ներկայացվող պահանջները

✓ Գիտությունների թեկնածու
✓ Մասնագիտական փորձ
✓ Դասավանդման փորձ
✓ Ֆրանսախոս կամ անգլախոս

Աշխատավարձը կախված է որակավորումից:

Մրցույթին մասնակցելու համար ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը ՀՖՀՀ-ի գլխավոր քարտուղար պ. Ալեքսանդր Մարտինետիին, **secretaire–general@ufar.am**

- ինքնակենսագրություն (հայերեն, ֆրանսերեն եւ անգլերեն)
- մոտիվացիոն նամակ (հայերեն, ֆրանսերեն եւ անգլերեն)

Դիմումները ներկայացնել մինչեւ 2009թ-ի հունիսի 30-ը:

Հարցազրույցի կհրավիրվեն ընտրված թեկնածուները:

ՀՖՀՀ-ին մանրամասն ծանոթանալու համար այցելել մեր ինտերնետային կայք www.ufar.am կամ զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով երկուշաբթիից ուրբաթ` ժամը 10:00-17:00, (010) 24 96 64:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 10.06.2009, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: